

Հորիզոն

Ապրիլ 2023 / APRIL 2023 / AVRIL 2023

horizon



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 108-ԱՄԵԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ
108th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE
108ème ANNIVERSAIRE DU GÉNOCIDE ARMÉNIEN



hearing aid source

hearing instrument specialists

HEAR CHARGE CONNECT

HEAR speech better in any environment with new Augmented Focus technology
CHARGE your hearing aids – Never change a tiny hearing aid battery again!
CONNECT your hearing aids to your Android or iPhone smartphone.



 hearing aid source
hearing instrument specialists



**TRY HEARING AIDS
RISK-FREE**

Call 416 754-4327



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

2 LOCATIONS

702 Coxwell Avenue
#704, Toronto, ON M4C 3B9
Tel: 416 463-4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#29 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327 (HEAR)

hello@hearingaidsource.ca

www.hearingaidsource.ca

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը, դատապարտումն ու հատուցումը հայ ազգի գոյատևելիության հիմնասիւններն են

«Ժողովուրդները ի վերջոյ տէր են մնում ոչ թէ նրան, ինչ որ նրանց տրոււմ է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան, ինչի որ արժանի են, ինչ որ սեփական ուժերով ապահովել են կարողանում»

Գարեգին Նժդեհ

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, 2015 թուականի Յունուար 1-ին, Միծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ պետական յատուկ արարողութեամբ հրապարակուեցաւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հուշակագիրը:

Հուշակագրի եզրափակիչ հատուածը կը հաստատէ, որ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը կար-որ հանգրուան է պատմական արդարութեան համար մղուող պայքարը շարունակելու եւ միաժամանակ կոչ կ'ուղղէ Հայ սերունդներուն պաշտպան կանգնիլ Հայրենիքին եւ աննահանջ պայքարով ծառայել յանուն՝ Հայաստանի Հանրապետութեան եւ անկախ Արցախի յառաջընթացի ու հզօրացման:

Համայն հայութեան ազգային իղձերը պարփակող այս հուշակագրի հրապարակումէն ուղիղ Ց տարի ետք, անկատար կը մնան իղձերը. ազատագրուած Արցախի աշխարհագրական մէկ հատուածը բռնագրաւուած է եւ հայաթափման սպառնալիքի ենթակայ է, իսկ ազգովին՝ երկփեղկուածութեան մատնուած ենք:

Առկայ է պահանջատիրական երթէն դասալիքներու խմբաւորում մը, որուն նպատակն է հայ ազգը զինաթափել իր արդար իրաւունքներու վերատիրանալու յանձնառութենէն: Յաղթական մեր խրոխտ երթը, ներկայ դրութեամբ խարխափած ու խորտակուած է:

Կանգնած ենք փանթուրանական ծաւալապատական ծրագրիներուն մէջ ջրամոյն դառնալու վտանգին դիմաց, ծրագիր, որ կը նպատակադրէ անէացման ենթարկել Հայաստանն ու իր բնօրրանին մէջ արարող հայութիւնը, ի սպառ կործանման մատնել Հայաստանի ու Արցախի պետականութիւնները:

Արցախեան պատերազմէն ետք, հետագայ բացասական ու աղէտալի զարգացումները կանխելու համար այսօր էական է վերստին համախմբուել ու ազգի ռազմաքաղաքական ներուժով դիմադրութեան ու պայքարի պատենչներուն վրայ կանգնիլ:

Ներկայ իշխանութիւններու օրով, Արցախեան Բ. Պատերազմի նախօրեակին, 2020 թուականի Յուլիսին հրապարակուեցաւ Հայաստանի Հանրապետութեան ազգային անվտանգութեան ռազմավարութեան վերախմբագրուած հայեցակարգը, որուն հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու անվտանգութիւնը եւ որպէս աշխարհապիւժ հայ ժողովուրդի հայրենիք՝ անոր պաշտպանութիւնը:

Ի դէպ, վերոնշեալ հայեցակարգի բովանդակու-

թեան մէջ, Հայոց Ցեղասպանութեան յատկացուած է լա-կոնական ենթաբաժին մը, մի քանի ժլատ եզրաբանութիւններով, ուր ոչ մէկ յիշատակում կայ Թուրքիոյ կողմէ հայութեան դէմ գործադրուած եղեռնագործութեան հետեւանքներուն գծով իրաւական պահանջներու թղթածրարի? Հատուցման մասին: Մէկ խօսքով, հայ ժողովուրդի, ցեղասպանութեան անմիջական հետեւանք համասփիւռ հայութեան հատուցման իրաւական պահանջը, այս իշխանութեան քաղաքական օրակարգէն դուրս մղուած է:

Անցնող տարիներուն, ՀՀ գործող իշխանութիւններու կողմէ հատուցման հարցը սքողելու փորձութիւնը զուգահեռ կ'ընթանայ թուրք-ատրպէյճանական ռազմաքաղաքական ճնշումներու դիմաց, իրերայաջորդ գիշումներու, որոնց հետեւանքները կրելու ենք ազգովին:

Մեր գոյատևելիութեան յարատեւ ընթացքը պայմանաւորուած է Սեւրի պայմանագրի վերընձիւղմամբ, որպէս իրաւատիրական անբեկանելի փաստաթուղթ, որպէս համազգային մեր իղձերու ու կամքի սեւեռակէտ:

Արցախի հիմնահամարցը հայոց պահանջատիրութեան ընդհանուր պարունակի կարեւոր բաղադրիչներէն է եւ երբ անցեալ դարավերջին համահայկական պոթիլումով սկիզբ առած ազատագրական պայքարը կ'արգիւնաւորուէր յաղթանակով, այդ պատմական իրագործումը ինքնին կ'ամրագրէր ու կը կոփէր պահանջատիրութեան շղթան՝ Հայոց արեւելեան սահմաններու ռազմավարական ամրակուռ յենարան Արցախի ազատագրումով:

Այսօր, երբ աշխարհաքաղաքական բարդ պայմաններու ներքեւ կը դիմագրաւենք բազում մարտահրաւէրներ, ժամանակն է, որ հայրենիքի ու Սփիւռքի մեր ողջ ներուժը ի սպաս դնենք ազգի գոյատևելիութիւնը լիարժէքօրէն կենսագործելու գերագոյն նպատակին եւ այդ մէկը առաջին հերթին մեզի կը պարտադրէ միասնութիւն մէկ ճակատի վրայ, որպէսզի մեր պետականութեան ինքնիշխանութեան, անկախութեան, տարածքային ամբողջականութեան եւ սահմաններու անձեռնմխելիութեան պահանջանքն ուղղութեամբ նպատակաւորուած ու համակարգուած ճիգերը արդիւնաւորուին:

Մեր պարտքն է, 2020 թուականի պատմական փորձութենէն ետք, կռանել ազգային գաղափարախօսութեամբ տողորուած մարտունակ սերունդ, որ անվկանդ շարունակէ հայութեան պատմական իրաւունքներու վերատիրացման արդար պայքարն ու հայրենատիրութեան առաքելութիւնը:

«Հորիզոն»ի Խմբագրական

Բովանդակութիւն - Contents - Sommaire

Ցեղասպանութիւնը քաղաքական օրակարգի վրայ, Խ. Տէր
Ղուկասեան, էջ 3

Ազգել եւ հակազգել, Վրէժ Արմէն, էջ 7

Հայոց իսլամական աշիրաթը, Ճորճ Աբէլեան, էջ 8

«Ցեղասպան թուրքը երբեք իր քաղաքականութեան մէջ չի
փոխուել». Պատմաբան Էդիկ Մինասեան, էջ 13

Յաւը, Նազան Ա., էջ 15Հ

Հայկական Հարցի համառօտ ակնարկ, էջ 17

Ուրֆայի հերոսամարտի դիւցազնուհին, Սոնա Զէյթլեան, էջ
18

Armenian Genocide Overview, P. 22

Chronologie sommaire du g nocide arm nien, P25



Մշեցի տարագիր հայ ընտանիք. 1915...

Ցեղասպանությունը քաղաքական օրակարգի վրայ Համասփիռքեան, արտաքին/ուսումնական, ԱնըՀայաստանեան, համահայկական՝...

Խ. Տեր Ղուկասեան

«Ողջակիզման պատմութիւնը քաղաքական դնա-
հատականի կեդրոնական ուշադրութեան առարկայ է, պատ-
ճառն այն է, որ Ողջակիզումը այնքան կարեւոր է ներկայ
աշխարհի մեր քաղաքական ընկալման համար, որ մարդիկ
չատ կրքոտ եւ երբեմն ալ, դժբախտաբար, շատ տխմար բա-
ներ կրնան ըսել անոր մասին», կ'ըսէ Ֆրանսացի պատմաբան
Յլորան Պայեարտ արժանթիւնեան մշակութային շաբաթօրեա-
լի մը իր տուած հարցազրոյցին մէջ(1): Պատմաբանը Ար-
ժանթիւն էր «Մտքերու գիշեր» փառատօնին մասնակցելու
համար արժանթիւնցի իրաւագէտ եւ Ողջակիզման պատմա-
բան Տանիէլ Ռաֆեքասի հետ «Վերջնական լուծումը» թե-
մայով մտքերու փոխանակման հանրային կլոր սեղանին
մասնակցելու համար:

Նշենք որ Ռաֆեքասի համանուն աշխատասիրու-
թիւնը՝ Վերջնական Լուծումին Պատմութիւնը(2), լուսարձա-
կի տակ կ'առնէ Նացիներու մօտէն ճանաչումը Հայոց Ցե-
ղասպանութեան: Գրքի երրորդ գլուխին մէջ, Ռաֆեքաս ցոյց
կու տայ, որ նախքան կազմ սենսակներու ծրագրերը, Եւրոպա-
յի հրէութեան ոչնչացման համար Նացիները նկատի առած
էին Սիպերիան, ուր տեղահանուած հրեաները պիտի տարուէ-
ին եւ լքուէին՝ սառնամանիքին մէջ բնաջնջուելու եւ մոռա-
ցութեան մատնուելու համար: Այնպէս ինչպէս Թալէթաթ
Հայկական Հարցին Լուծումը ծրագրած եւ գործադրած էր
Առաջին Համաշխարհային Պատերազմին: Անապատի կիզիչ
արեւին տակ ամբողջ ազգի մը բնաջնջում/մոռացումը հա-
յուութեան պարագային, նոյնը՝ Եւրոպայի հրեաներուն, բայց
այս անգամ Սիպերիոյ սառնամանիքին մէջ: Արեւելեան ծա-
կատի վրայ Նացի Գերմանիոյ պարտութիւնը եղաւ հիմնա-
կան պատճառը, որ այդ ծրագրի փոխարէն ի գործ դրուեցաւ
Առևտուիչը: Ռաֆեքասի գիրքը, որուն ուսումնասիրական
աշխատանքները կատարելու ժամանակ հեղինակը դիմած է
Պուէնոս Ալրէսի ՆՅԳ Հայ Դատի Յանձնախումբին եւ անոր
միջոցաւ հանդիպումներ ունեցած է Հայոց Ցեղասպանու-
թեան հարցով հրատարակութիւններ ունեցող համայնքի
ակադեմականներու թէ երկրին մէջ 2006-ի Ցեղասպանու-
թեան Օրէնքի անցկացման համար քաղաքական աշխա-
տանքներուն մասնակիցներուն հետ, վերահրատարակուած է,
թարգմանուած է անգլերէնի, տարածուած աշխարհով մէկ, եւ
նիւթը, Վերջնական Լուծումի որոշման կայացման ամենայն-
տին ծալքերու բացայայտման անհրաժեշտութիւնը, կը մնայ
խիստ այժմէական:

Նոյն այդ հարցազրոյցին մէջ, Պայեարտ նաեւ կը նշէ,
որ միջազգային արդարադատութեան անհրաժեշտութիւնը
զգացուեցաւ, որպէս հետեւանք Ողջակիզումին. «Ցեղասպա-
նութեան ոճիրը եւ մեր հասկացողութիւնը, թէ որքան անըն-
դունելի են նման քաղաքականութիւններ, նաեւ հետեւանք են
Երկրորդ Համաշխարհային Պատերազմին եւ Հիթլերին»:

Այս ըսուածին մէջ նորութիւն չկայ: Ռաֆայէլ Լեմ-

քինի բանաձեւած «Ցեղասպանութիւն» իրաւաքաղաքական
յղացքը ինքնին ծնաւ Ողջակիզման երեւոյթին որպէս հետե-
ւանք, եւ յաջորդող տասնամեակներուն ծնունդ տուաւ մի-
ջազգային տարբեր հիմնարկութիւններու եւ հայեցակարգե-
րու, սկսելով ՄԱԿ-ի 1948-ի Ցեղասպանութեան ոճիրի կան-
խարգիւման համաձայնութենէն մինչեւ կէս դար յետոյ Հոռ-
մի համաձայնագիր եւ Միջազգային Քրէական Ատեանի
ստեղծում, եւ արդէն քսանմէկերորդ դարուն՝ Պահպանելու
Պատասխանատուութեան հայեցակարգ: Ողջակիզման հետե-
ւումով ծնունդ առած միջազգային արդարադատութիւնը, իր
կարգին, դուռ բացաւ պատմական յետադարձ ակնարկներու
բազմացման, ընդ որում տեսանելի դառնալու սկսանք քսանե-
րորդ դարու եւ անկէ առաջ բազմաթիւ պետական ծրագրի-
ներ, որոնց դիտաւորեալ նպատակը, ուղղակիօրէն թէ անուղ-
ղակիօրէն, եղած է ամբողջ հաւաքականութիւններու բնաջն-
ջումը եւ ոճիրի յիշատակին անհետացումը: Այդ յետադարձ
ակնարկներու առաջնահերթայիններէն եղաւ Հայոց Ցեղաս-
պանութեան դուրս բերումը համաշխարհային մոռացումէ,
ուր մնացած էր որպէս հետեւանք Թուրքիոյ ժխտողականու-
թեան, Սորհրդային կարգերու տակ Հայաստանի մէջ անոր
մասին պաշտօնական լուծութեան, գոնէ մինչեւ 1965, եւ մե-
ծապետական քաղաքականութեան մեղսակցութեան:

Պատմութեան մոռացութենէն դուրս բերուած ցե-
ղասպանութիւններէն ոչ մէկը, սակայն, յաջողեցաւ Ողջա-
կիզման չափ ունենալ համաշխարհային հնչեղութիւն եւ
առաջացնել միջազգային յանձնառութիւն: Պատճառը
միայն այն չէ, որ, ինչպէս Ֆրանսացի պատմաբանը կը նշէ,
Ողջակիզման երեւոյթը ծնունդ տուաւ ցեղասպանութեան
ոճիրի դէմ համամարդկային յանձնառութեան անհրաժեշ-
տութեան: Ողջակիզման երեւոյթի միջազգային յանձնառու-
թեան համար նոյնքան հիմնարարական եղաւ անոր ներա-
ռումը Իսրայէլի ազգային ապահովութեան ռազմավարու-
թեան եւ դիւանագիտական օրակարգին վրայ, ինչպէս նաեւ
այդ օրակարգին այժմէականութիւնը կենդանի պահելու հե-
տամուտ Իսրայէլի պետութեան եւ հրէական սփիւռքի մնա-
յուն եւ հայեցակարգային համագործակցութիւնը: Փաստօ-
րէն, մինչեւ անցեալ դարու եօթանասունական թուականները
միջազգային հանրային կարծիքին համար Ողջակիզումը
մարդկութեան դէմ միակ ոճիրն էր, որ կը նոյնացուէր ցե-
ղասպանութեան հետ:

Այսինքն, Նիւրեմպերկը, ոճրագործներու պատաս-
խանատուութեան ենթարկումը, արդարահատոյցը եւ Գեր-
մանիոյ մէջ Նացիական անցեալին չվերադառնալու եւ դայն
կտրուկ կերպով դատապարտելու շրջադարձը 1960-ականնե-
րու աւարտին, ո՛չ Իսրայէլի եւ ո՛չ ալ հրէական սփիւռքին
համար նշանակեց, որ Ողջակիզումը այլեւս անցեալի, այ-
սինքն լուր պատմաբաններու, ձգուելիք հարց է: Ընդհակա-
ռակը, յղացքին հետտորական դոյզն նսեմացումն իսկ մինչեւ

այսօր ծնունդ կու տայ ե՛լ պետական մակարդակով, ե՛լ հրէական սփիւռքի կողմէ բուռն հակազդեցութեան եւ համայն աշխարհին կը յիշեցնէ իր յանձնառութիւնը:

Այսպէս, անցեալ տարուան Օգոստոսին, Պաղեստինցի ղեկավար Մահմուտ Ապպաս Պեւրի իր այցելութեան ընթացքին, մամլոյ ասուլիսի ժամանակ Իսրայէլը ամբաստանեց 1947-էն ի վեր իր ժողովուրդին դէմ «յիսուն Ողջակիզում» կազմակերպելու: Մամլոյ ասուլիսը Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլցին հետ էր, աւարտեցաւ Ապպասի այդ պատասխանէն յետոյ, եւ երկու ղեկավարները իրարու ձեռք սեղմեցին: Շոլցի կողմէ այդ ժեստը պատճառ դարձաւ, որ անմիջապէս իր դէմ տեղալու սկսին ամէն կարգի ամբաստանութիւններ, սկսելով ընդդիմադիր Քրիստոնեայ ժողովրդավարներէն, մինչեւ Իսրայէլի օրուան վարչապետը, եւ Անկելա Մերքել, որոնք իրեն յուշեցին, թէ չէր կրնար այդպէս անպատասխան թողնել Ապպասի յայտարարութիւնը: Արդիւնքով՝ Շոլց տեղական թերթի մը մէջ յատկացուց, որ գերմանացիներու համար Ողջակիզման որեւէ նսեմացում անընդունելի էր: Արժանիքի նախագահ Ալպրիթօ Ֆերնանտէս, որ իր Նախագահութեան առաջին այցելութիւնը 27 Յունուար 2020-ին կատարեց Երուսաղէմ, մասնակցելու համար Ողջակիզման Զոհերու Յիշատակի Միջազգային Օրուան միջոցառումներուն, անցեալ տարի, հրապարակային ելոյթի մը ընթացքին ըսաւ, որ համավարակը համազօր կրնար ըլլալ մէկ կամ երկու Ողջակիզման: Երկրի հրէական համայնքի կազմակերպութիւնները համախմբող կառույցը անմիջապէս հակազդեց, զգուշացնելով որ կարելի չէ Ողջակիզում յղացքի գործածումը պարզացնել հրապարակային բաղադատութիւններու համար եւ քաղաքականացնել իր իմաստէն դուրս: Միացեալ Թագաւորութեան Պահպանողական Կուսակցութեան պատգամաւոր մը, որ բուռն կերպով կ'ընդդիմանար պատուաստումին, անցեալ Յունուարին, օրէնսդիր ժողովին իր ելոյթին ընթացքին ըսաւ, որ Քովիտ-ի դէմ պատուաստումը «Ողջակիզումէն յետոյ մարդկութեան դէմ ամենամեծ ոճիրն է»: Պահպանողական Կուսակցութիւնը գայն վտարեց կուսակցութեան շարքերէն, իսկ Վարչապետ Րիչի Սունաք «անընդունելի» համարեց նման հռետորութիւն եւ վերահաստատեց իր յանձնառութիւնը՝ «արմատախիլ ընելու հակասեմականութեան պատուհասը»:

Պատմաբան Փիթեր Նովիք իր 1999-ի աշխատասիրութեամբ(3) լուսարձակի տակ առած է քաղաքական գործընթացը, որ 1960-ականներէն սկսեալ Ողջակիզումը վերածեց ԱՄՆ-ի մէջ հրեայ համայնքի համար ինքնութեան յանձնառութեան: Անկախ իր թէզէն, ինչպէս նաեւ մէկ տարի յետոյ Նորմըն Յինքըլըթայնի գիրքին(4) առաջացուցած հակազդեցութիւններէն, ինչ որ յատկանշական է Նովիքի ուսումնասիրութեան մէջ՝ Ողջակիզման հարցին քաղաքականացումն է, որպէս ինքնութեան գործօն: Ի մտի ունենալով, անշուշտ, որ քաղաքականացման որեւէ գործընթացի ընդունելն է տուեալ հարցով շահագրգռուած հատուածներու, այս պարագային՝ հրէական համայնքն ու Իսրայէլի պետութիւնը մէկ կողմէն եւ ԱՄՆ-ի քաղաքական վերնախաւն ու իր ընտրական հաշիւները միւս կողմէն, փոխադարձ առաջարկ-պահանջարկ բանակցութիւնը:

Նովիք եւ Յինքըլըթայն Ողջակիզման քաղաքականացումը խնդրայարոյց կը նկատեն բարոյական եւ համամարդկային տեսանկիւնէն եւ դիտել կու տան, օրինակի համար, որ այն կրնայ այլ ոճիրներու մասշտապը նուազեցնել: Բայց, անոնց, եւ այլ պատմաբաններու թէ իմաստասէրներու, ակադեմական, բարոյախօսական թէ համամարդկային մտահոգութիւնները հասկնալով հանդերձ, ցեղասպանութեան

ոճիրին քաղաքականացումը ունի իր իւրաքանչեւ Րէզոնս'էթը-ը, որ ընկալելի է միայն միջազգային քաղաքականութեան ուժական պայքարի իրապաշտ տրամաբանութեան ընդմէջէն: Այդ մէկը յատկապէս կը վերաբերի ցեղասպանութեան աղէտէն անցած ե՛լ պետականազուրկ հաւաքականութիւններու, ե՛լ պետութիւններու, ի մասնաւորի անոնց, որոնք աշխարհաքաղաքականօրէն փոքր եւ խոցելի են:

Արդ, որքանո՞վ Հայոց Ցեղասպանութիւնը քաղաքականացած է ներհայկական թէ միջազգային ոլորտներուն մէջ:

Մինչեւ Հայաստանի անկախացումը այս հարցումը կրնար անիմաստ թուիլ: Հայ ժողովուրդի քաղաքականացումը, հայրենիքի մէջ թէ Սփիւռքի տարածքին, սկսաւ Ցեղասպանութեան ոճիրի միջազգային ճանաչման եւ արդարահաստոյցի պահանջով: Հայաստանի խորհրդայնացումէն ետք ոչ մէկ իրադարձութիւն այնքան բացայայտած էր եւ արմատաւորած հայութեան քաղաքականացումը, որքան Ցեղասպանութեան 50-րդ տարելիցը 1965-ին: Այդ շրջադարձային թուականէն ետք, Սփիւռքի քաղաքականացումը, փաստօրէն, նոյնացաւ Հայ Դատի պայքարին հետ, որ, անխուսափելիօրէն, Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը ունեցաւ որպէս առաջնահերթային հանգրուան, եւ արձանագրեց թէ-կուզ եւ սահմանափակ, բայց այնուամենայնիւ նշանակալից յաղորդութիւններ: Ցեղասպանութեան քաղաքականացումը, հետեւեալ, իրականացաւ պետականազուրկ բայց համաշխարհային մասշտապով զօրաշարժ կազմակերպելու ատակ Սփիւռք քաղաքացիական հասարակութեան կողմէ, հիմնականօրէն 1965-1985/87 ճակատագրական երկտասնամեակին:

Պատմական պատեհ զուգահիշութեամբ, Սփիւռքի քաղաքականացման այդ հանգրուանի արդէն լրումի ժամանակներուն օրակարգի եկաւ Արցախեան հիմնահարցը, որուն սկիզբէն Սովետային փոկրոմը եկաւ յիշեցնելու, թէ որքան խոր է հայատեացութիւնը եւ որքան այժմէական՝ փանթրքականութեան յանձնառութիւնը ազգակից երկու ժողովուրդներուն՝ թուրքերու եւ աղբրիներու, եւ իրենց քաղաքական վերնախաւին մօտ: Պատերազմի վերաճած Արցախեան ազատագրական պայքարին առաջին գիծի վրայ գտնուող հրամանատարներուն մօտ փանթրքականութեան սպառնալիքի չէզոքացման, այսինքն՝ Ցեղասպանութեան կրկնութեան կանխարգիլման, գիտակցութիւնը առկայ էր միշտ: Հայաստանի մէջ, սակայն, անկախութենէն յետոյ իշխանութեան հասած քաղաքական վերնախաւին մօտ արդէն Ցեղասպանութեան ապաքաղաքականացման յատակ որոշում դրսևերուցեալ՝ Հայ Դատը, կամ՝ «Հայ Դատականութիւնը» ինչպէս ոմանք փորձեցին միտումնաւոր բնութագրել այդ պահանջատիրութիւնը գայն նսեմացնելու/հատուածականացնելու միտումով, հակադրելով այսպէս կոչուած «պետական մտածողութեան» եւ իր բանականութեան:

Մտահոգութեան կիզակէտին էր Թուրքիոյ հետ Հայաստանի Հանրապետութեան յարաբերութիւններու բնականոնացումը, որուն հետագային կցուեցաւ «առանց նախապայմանի» խնդրայարոյց եւ ամէն ձեւի մեկնաբանութեան համար խիստ առաձգական բանաձեւումը որպէս արտաքին քաղաքականութեան ուղղութիւն: Առաջին Նախագահին եւ իր խորհրդականներուն համար հարցը պարզ եւ մէկին էր. Ցեղասպանութիւնը քաղաքական օրակարգի վրայ չէ, չի՛ կրնար ըլլալ, եւ վերջ: 1998-ի իշխանափոխութենէն ետք հարցը տեղադրուեցաւ արտաքին քաղաքականութեան օրակարգին, բայց ոչ յայտարարութիւններէ անդին: Փաստօրէն, յաղորդ երկու Նախագահներու օրօք, «Թուրքիոյ հետ առանց նախապայմաններու յարաբերութիւններ» ու սկզբունքը

միշտ ալ գործնականացման փորձութեան ենթարկուեցաւ ընդհուպ մինչեւ Փրոթոքոլներ: Ներկայիս, Քառասունչորսօրեայ Պատերազմի պարտութեան պատասխանատուները, որոնք այնուամենայնիւ յաջողեցան իշխանութեան վրայ մնալ, արդէն կը քննարկեն՝ ինչպէ՛ս ընդառաջել թուրքիոյ դրած նախապայմաններուն, որպէսզի կարելի ըլլայ յարաբերութիւնները բնականոնացնել՝ «տարածաշրջանային խաղաղութեան դարաշրջան»ի իրենց զառանցանքին ձիրին մէջ:

Իսկ թրքական նախապայմանները արդէն յայտնի են՝ Արցախի ճանաչումը Ատրպէյճանի կազմէն ներս, Յեղասպանութեան հարցէն վերջնական հրաժարում եւ թուրքիոյ հետ ներկայ սահմաններու պաշտօնական ճանաչում՝ «հողային պահանջ չունենալու» յայտարարութենէն անդին: Պարտութեան իշխանութիւններուն համար այս նախապայմաններու ընդունումը արդէն հարց չէ: Բայց թուրքիա նախապայմաններու նշանաձող բարձրացուցած է եւ աւելցուցած Ատրպէյճանի պահանջած Զանգեզուրի միջանցքը, որով արդէն առաջին յաջող քայլը առնուած կ'ըլլայ դէպի Փանթրքական ծրագրի իրագործում եւ Հայաստանի անհետացում: Եթէ նախորդ իշխանութիւնները, ի մասնաւորի Սարգսեանի կառավարութիւնը, այն յոյսը ունէր, որ թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականանոցումը կրնայ իրականանալ անշատաբար հայ-ատրպէյճանական հակամարտութեան օրակարգէն, ապա եւ Քառասունչորսօրեայ Պատերազմը եկաւ պարզ եւ մէկին ցոյց տալու, որ նման սպասում միայն անհեթեթ է: Ատով հանդերձ, ներկայ իշխանութիւններուն համար հայ-թրքական բանակցութիւններու ներկայ փուլին ամէն ձեւական թէկուզ եւ էպպէս անիմաստ յայտարարութիւն կամ ժեսթ, ծափահարելի է որպէս առաջին թաց: Շատ հաւանաբար սեփական ձախողութեան հակափաստի մը ինքնախաբէութեան կարգով...

Պահ մը ետ երթանք դէպի ինիսունականներ եւ հարց տանք՝ անկախութենէն ետք, քաղաքական օրակարգի ձեւաւորման գործընթացներուն մէջ, իսկապէ՞ս այնքան ռիսքային էր առաջին օրէն իսկ Յեղասպանութեան հարցը ընկալել որպէս ռազմավարական գործօն, եւ հայեցակարգային մօտեցումով շարկապել Հայ Դատի պահանջատիրութիւնն ու նորածնունդ հայկական դիւանագիտութիւնը: Հարցը այն չէ, թէ ինչպէ՞ս կարելի էր ընել: Հարցն այն է, որ երբեք այդ մէկը այլընտրանք չեղաւ, որպէսզի այդ մասին գոնէ ուսումնասիրական/խորհրդակցական մնայուն միջոց մը ստեղծուէր: Հարցը օրակարգի վրայ դրուեցաւ, եւ Սփիւռքի քաղաքական կազմակերպութիւններու հետ պարբերական համագործակցութեան առիթներ ստեղծուեցան միայն առիթներու կամ պատահականօրէն: Միայն Փրոթոքոլներու սառեցումէն ետք, Յեղասպանութեան Հարիւրերորդ Տարելիցի նախապատրաստական աշխատանքներու ձիրին մէջ, Հարիւրերորդ Տարելիցի միջազգային հնչեղութեամբ, Համահայկական Հռչակագրով, եւ անոր հայկական դիւանագիտութիւնը աշխուժացաւ, ինչպէս երբեք, եւ միջազգային կազմակերպութիւններու մէջ Յեղասպանութեան հարցով դիմեց տարբեր նախաձեռնութիւններու:

Այդ մէկը արդէն կը յուշէ նման նախանձախնդրութեան մը կարողականութիւնը՝ ե՛ւ համահայկական զօրաշարժի մը առաջացման եւ անոր մնայուն ընդլիճ վերածման, ե՛ւ միջազգային օրակարգի վրայ Հայաստանի տեղի եւ ինքնութեան ամրագրման համար: Այդուհանդերձ, Հարիւրերորդ Տարելիցին յաջորդած երկու-երեք տարիներուն, մինչեւ 2018 Ապրիլի ժողովրդային զանգուածային զօրաշարժ եւ անոր հետեւած իշխանափոխութիւն, հայկական դիւանագիտութեան եւ Սփիւռքի մէջ Հայ Դատի աշխատանքներու փոխ-



կապակցութիւնը հայեցակարգի չվերածուեցաւ: Այսինքն՝ Յեղասպանութեան հարցով հայկական դիւանագիտութիւնը աւելի աշխուժացաւ միջազգային կազմակերպութիւններու մէջ, սակայն Սփիւռքի մէջ Հայ Դատի աշխատանքներուն հետ համագործակցութիւնը մնաց առիթային եւ պատահական, չունեցաւ նպատակասլաց եւ ռազմավարական ուղղուածութիւն: Ապրիլ 2016-ի Քառօրեայ Պատերազմն ու անոր յաջորդած ներհայաստանեան սոցիալական թէ քաղաքական լարուածութիւնը, առաւել՝ իշխանութեան վրայ գտնուող քաղաքական ուժի առաջնահերթութիւնը՝ Սահմանադրութեան փոփոխութեամբ իշխանութեան վրայ յարատեւում, անկասկած ունեցան իրենց դերը խոստմնալից գործընթացի մը սառեցման մէջ:

Բայց հոս եւս անհրաժեշտ է հարց տալ, թէ երբեք Յեղասպանութեան հարցը արտաքին/ռազմավարական օրակարգի վրայ տեսնելու կարելորդութիւնը կը զգացուէ՞ր Հայաստանի քաղաքական վերնախաւին կողմէ: Ի վերջոյ, Համահայկական Հռչակագիրը ի լուր աշխարհին յայտարարած էր, թէ Յեղասպանութեան պահանջատիրութիւնը կը թեւակոխէր արդարահատոյցի հանգրուանը, ինչ որ կը պահանջէր արտաքին քաղաքականութեան օրակարգին ունենալ ծրագիր մը եւ անոր գործնականացման ընթացակարգ: Թէ՞ Հռչակագրին տրամադրուածութիւնը պիտի մնար յայտարարութիւն, գոնէ անորոշ ժամանակի մը համար, որովհետեւ անոր գործնականացումը շատ ռիսքային էր, եւ, ամէն պարագայի, Սփիւռքի «Հայ Դատական»ներուն պետական մակարդակով

յան ձնառու թեան գրաւոր փաստը տրուած էր եւ իրենց ողջամտութեան կը ձգուէր գիտակցիլ, որ «Պետական մտածողութիւնը» իր ժամանակն ու ժամանակացոյցը ունի հարցը օրակարգի բերելու համար...

Կը մնայ, որ հակառակ Հարիւրերորդ Տարիլիցի նախօրեակի սպասումներուն, Հայաստանի պետական համակարգէն ներս սփիւռքեան համայնքներու ներկայացուցչութեան եւ/կամ համահայկական խորհուրդի մը առաջացման ծրագիրները չիրականացան: Ի շարս շատ այլ օրակարգային հարցերու, որոնք կրնային սեղանի վրայ դրուիլ, եթէ հայութիւնը, եւ օրուան հայրենի թէ՛ Սփիւռքեան ղեկավարութիւնը, ատակ ըլլար քաղաքական գործարարական որակական նման յառաջընթացի, Յեղասպանութիւնը եւս աւելի դիւրին, կամ նուազ դժուար կերպով, կրնար տեղադրուիլ արտաքին/ուսումնական օրակարգին վրայ, որովհետեւ, գէթ տեսականօրէն, Հայաստան-Սփիւռք համատեղման կառույց մը պատեհութիւն ստեղծած կ'ըլլար հարցի համապատասխան համակարգումի եւ հայեցակարգումի:

Դժբախտաբար համասփիւռքեան զօրաշարժի ատակ կազմակերպութիւնները, որոնք աշխատած էին արդարահաստոյցի ծրագրի մը շուրջ, իրենք եւս նախաձեռնող չեղան այդ ուղղութեամբ գործնական քայլերու: Եթէ նման քայլեր տրուեցան ապա եւ չունեցան անհրաժեշտ շարունակականութիւն: Ինչպէս այլ պարագաներու, Քառօրեայ Պատերազմի յաջորդած ներհայաստանեան մարտահրաւէրներուն առաջնահերթութիւնը եղաւ այն պատճառ/բացատրութիւն/արդարացումը: Արդիւնքով՝ գոնէ Սփիւռքի մէջ եւ թէկուզ առանձին, այսինքն՝ առանց սպասելու հայրենի պետական մասնակցութեան կամ աջակցութեան, արդարահաստոյցի հանգրուանը գործնական հունի վրայ դնելու, եւ այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական եւ մարդու ճիւղերումի, նախանձախնդրութիւնը բացակայեցաւ:

Քառասունչորսօրեայ Պատերազմէն յետոյ իշխանութեան վրայ գտնուող քաղաքական ուժին «տարածաշրջանային խաղաղութեան դարաշրջան»ի գառնացանքն ու թուրքիոյ նախապայմաններու ընդառաջումով յարաբերութիւններու բնականոնացման ձգտելու անպատասխանատու փութկոտութիւնը ոչ միայն բացառած է Յեղասպանութեան քաղաքականացումը, այլ շատ վտանգաւոր կերպով ուղի կը հարթէ անոր անէացման: Պատերազմի ժամանակ շեշտադրուած կերպով ցեղասպանութեան սպառնալիքի մասին յայտարարութիւններ կատարելէ յետոյ, Վարչապետ Նիկոլ Փաշինեան արդէն բացառելու սկսած է յղացքի գործածութիւնը իր հրապարակային ելոյթներուն, ի մասնաւորի միջազգային բեմերէ: Յղացքի հանրային գործածութեան բացառման փորձերուն զուգահեռ, իշխող ուժի ներկայացուցիչ ղեմքեր գործածութեան մէջ կը դնեն նոր յղացքներ, ինչպէս «Թուրքիոյ հետ չթշնամանքի յարաբերութիւններ», կը նսեմացնեն Մի-ձեռնակաբերդի մէջ թուրք «բլոգեր»ի մը նահատակաց սրբապղծումը, կ'անտեսեն թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարի Գորշ Գայլերու նշանի սպառնալիք ցուցադրումը իր դէմ բողոքի ցոյցի ելած սփիւռքահայերու, եւ Ապրիլ 24-ի օրով հրապարակային հարց կու տան Յեղասպանութեան միջազգային ճանաչման «յաւելեալ արժէք»ին մասին... Այս բոլորը արձանագրուած է, անոնց մասին տարբեր աւիթներու գրուած է, բայց անոնց յիշեցումը կրկին ու կրկին անհրաժեշտ է, որովհետեւ արդէն ներազգային ոլորտի մէջ Յեղասպանութեան հարցով «յոգնութեան» վտանգաւոր ալիք մը կամայ թէ՛ ակամայ ձեւաւորուելու սկսած է: Այնքան ալ հազուադէպ չէ լսել Յեղասպանութեան հարցէն «դեռ չձանձրացա՞ք» հարցումը, աւելի խելամիտները դիտել կու

տան, որ աշխարհը այլեւս գիտէ Յեղասպանութեան մասին, եւ ճանաչումը այլեւս «պէտք է դիտել տարբեր ձեւով» առանց երբեք այդ «տարբեր»ը յստակացնելու, բացի անկէ որ այն Սփիւռքի «աւանդական»էն... տարբեր պիտի ըլլայ:

Անցնող քսանհինգ տարիներու ընթացքին, երբ առաջըր առնուեցաւ առաջին նախագահի կողմէ Յեղասպանութիւնը բացառապէս պատմաբաններուն ձգելու որոշումին հաստատագրման, Յեղասպանութեան հարցը այնպէս ալ չամրագրուեցաւ արտաքին/ուսումնական օրակարգին վրայ, չստեղծուեցաւ Յեղասպանութեան միջազգային արժարժման համահայկական հայեցակարգ: Այդուհանդերձ, դրական տեղաշարժեր դէպի քաղաքականացում եւ, թերեւս, համահայկական հայեցակարգի ստեղծում, արձանագրուեցան Յեղասպանութեան Հարիւրերորդ Տարիլիցի յանձնառուութեան եւ անոր յաջորդած քանի մը տարիներուն: Այսօր, սակայն, Քառասունչորսօրեայ Պատերազմէն ետք, եւ ձեռամբ Ապրիլ 2018-ի իշխանափոխութեամբ պետական համակարգի վրայ տիրապետութիւն հաստատած եւ զայն իրենց ձեռքերուն մէջ պահած խմբակին, Յեղասպանութեան հարցը կ'ապաքաղաքականայ: Թէ՛ ի՞նչ է այս ապաքաղաքականացման վտանգը, կամ, հարցը տարբեր դնելով, ի՞նչ է իմաստը Յեղասպանութեան հարցը միշտ այժմէական պահելու նախանձախնդրութեան, պատասխանը թերեւս պիտի ձեւաւորել հետեւելով Թոպի Լիջիլիկի յօդուածին՝ հակասեմականութեան նորագոյն արտայայտութեան մասին(5): Յօդուածին խորագիրը արդէն կը յուշէ. «Հակասեմականութեան անտեսումը զայն միայն աւելի կը զօրացնէ»: Յեղասպանութեան մասին լռել, նոր բառապաշար փնտռել, «տարբեր» ձեւով մտածելու ճիգ ընել... մէկ խօսքով՝ Յեղասպանութիւնը ապաքաղաքականացնել կը նշանակէ հաստատագրել թրքական ժխտողականութիւնը:

Բարեբախտաբար ակադեմական/մտաւորական ոլորտին մէջ, Հայաստան թէ՛ Սփիւռք, գիտակցութիւնը թէ՛ ցեղասպանութեան նման Գերագոյն Չարիքի մը յետին ծալքերու բացայայտումը չի՛ կրնար կանգ առնել՝ բարձր է, եւ կը շարունակուի: Կը մնայ սպասել, որ Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ այդ գիտակցութեան մակարդակի տեսլական ունեցող ղեկավարութիւն մը մէջտեղ գայ, որ նախաձեռնէ թէ՛ կողմ եւ միակողմանիօրէն, Յեղասպանութեան հարցի վերաքաղաքականացման, եւ կեանքի կոչէ Համահայկական Հոգեկազմը: Միշտ ի մտի ունենալով որ Յեղասպանութեան քաղաքականացումը եւ անոր այժմէականութեան պահպանումը համահայկական յանձնառուութիւն է, պէ՛տք է ըլլայ, պիտի՛ ըլլայ:

1Bibana Ruiz, El Holocausto posibilidad la justicia global, 25.03.2023, p. 7.

2Daniel Rafecas, Historia de la solucign final. Una indagacion de las etapas que llevaron al exterminio de los judıos europeos. Buenos Aires: siglo veintiuno editores, 2012.

3Peter Novick, The Holocaust in American Life, New York: Houghton Mifflin Company, 1999.

4Norman Finkelstein, The Holocaust Industry, New York: Verso Books, 2000.

5Tobi Lichtig, Ignoring Antisemitism Only Makes It Stronger, New Lines Magazine, February 3, 2023.

ՀԱՅ ԴԱՏ

Ազդել եւ հակազդել

Հայ դատը մեր պատկերացումներուն մէջ կը ներկայանայ քանի մը երեսներով, որոնց ամենէն ցայտունները, այսինքն ամենէն աւելի աչքառունները բողոքի ցոյցերն են, քաղաքական դէմքերու հետ յարաբերութիւնները, Հայոց ցեղասպանութեան յիշատակումի պարիւրեան միջոցառումները: Կայ սակայն ուրիշ երես մը, որուն մասին շատ չի խօսուիր, որ յաճախ նաեւ չ'երեւիր, որ սակայն նոյնքան կենսական է, եթէ ոչ աւելի՛ կենսական քան մնացեալ բոլոր աշխատանքները միասին առնուած:

Ո՞րն է այդ երեսը:

Այդ՝ քարոզչութեա՛ն մարզն է, եւ եթէ յօդուածիս վերնագրին մէջ այլ բառեր գործածեցի, անոր համար է, որ «քարոզչութիւն» եւ «հակաքարոզչութիւն» կրնան մեր միտքը տարբեր ուղղութեամբ տանիլ: Անոնք երբեմն նոյնիսկ ժխտական իմաստ ալ կրնան առնել, այդ պատճառաւ որոշեցի ապաւինիլ «ազդեցութիւն» եւ «հակազդեցութիւն» եզրերուն, անոնցմէ բխած բայերուն:

Այո՛, ազդել եւ հակազդել: Գործունէութեան ի՞նչ անսահման դաշտ մը, որ դժբախտաբար գրեթէ կոյս կը մնայ, ամայի, անտոնակոխ: Մինչդեռ ան կրնայ դառնալ, պէ՛տք է դառնայ համայն մեր կարողականութիւնը գործի լծող մարզը:

Ի՞նչ պէտք է հասկնանք այդ երկու բառերով կամ բառ-յղացքներով:

Ազդելը:

Տեղեկացնել ճշմարտութիւնը: Բացայայտել իրականութիւնը: Յոյց տալ ի՛նչ պատահած է, ի՞նչ կը պատահի, ի՞նչ պիտի պատահի: Իրազեկել՝:

Կասկած չկայ, ամեն հայ կրնայ իր ներգործմը ունենալ այս առնչութեամբ, եթէ անշուշտ նախապէս նաեւ աշխատանք տարուած է գինք լաւատեղեակ պահելու մեր պատմութեան, մշակոյթին, ներկայ անցուդարձերուն: Հոս արդէն կու գայ ներքին ազդեցութեան՝ դաստիարակութեան հարցը, որ ներկայ յօդուածին նիւթէն դուրս է այս անգամ:

Բայց այս մարզին մէջ ի հարկէ պայքարի առաջնագիծին վրայ կանգնողները գրողներն են, հրապարակագիրները, պատմաբանները եւ ընդհանրապէս մտաւորականութիւնը. անոնք անդադար պիտի գրեն, խօսին, բարձրաձայնեն Հայ դատի մասին: Անոնցմէ ոմանք իրենց ամբողջ կեանքը պիտի նուիրեն այդ նպատակին, ինչ որ կը նշանակէ նաեւ անոնց տէր ըլլալ, անոնց ապրուստը ապահովել: Անաղմուկ, նոյնիսկ ծածուկ՝ ուղարկութիւն չգրաւելու եւ խանդարիչ ազդակները հետու պահելու համար: Կը նշանակէ տարեկան նախահաշիւ ունենալ այս նպատակին համար: Հիմնադրա՛մ: Թերեւս կը նշանակէ նաեւ աւելի խնայողական ըլլալ այլ մարզերու մէջ:

Առանց ստորագնահատելու անհատական նախաձեռնութիւնները, այս պէտք է ըլլայ հաւաքական ծրագրուած աշխատանքի արդիւնք, որակի տեսակէտէն՝ բարձրագո՛յն մակարդակի վրայ:

Իսկ հակազդելը:

Հետեւել, գիտնալ թէ ի՞նչ կ'ըսեն ուրիշներ՝ թշնամիներ կամ բարեկամներ, եւ հակադարձել, սրբագրել, ամրակայել ի հարկին: Ձէ՞ որ գրուած, արտասանուած իւրաքանչիւր



խօսք կրնայ ճշմարտութիւն նկատուիլ եթէ չառարկուի, կամ մոռացութեան տրուիլ եթէ չկրկնուի, չտարածուի:

Եւ ասա գործունէութեան ա՛լ աւելի լայն դաշտ մը, ուր իւրաքանչիւր հայորդի կրնայ ներգործւում ունենալ: Իւրաքանչիւր հայորդի՝ եթէ գիտնուած է այդ ուղղութեամբ, գիտնորագրուած:

Այս կը նշանակէ հետեւել մամուլին, գրաւոր թէ բանաւոր, պատրաստ ըլլալ միջամտելու օրի՛ն, երբեմն նոյնիսկ նոյն պահուն, եւ ձեռքի տակ ունենալ անհրաժեշտ նիւթերը զանոնք տեղին համաձայն հայթայթելու համար: Այս ալ կը նշանակէ ունենալ ծրագրում թէ՛ տեղական, թէ՛ շրջանային եւ թէ՛ համաշխարհային առումով: Կը նշանակէ ունենալ տեղեկատուական գրասենեակ, արխիւ ու մանաւանդ ցանց, հազարաւոր, տասնեակ հազարաւոր անդամներէ բաղկացած ցանց: Ահա ձեզի կամաւոր բանակ, անպարտելի՛ բանակ: Այո՛, այս ալ նիւթական կռուաններու կը կարօտի: Ի՞նչը կ'արգիլէ մեզի, որ գոյացնենք այդ կռուանները:

Գոյացնենք համախմբելով մեր ուժերը՝ օգտուելու համար մեր ամբողջ ներուժէն, այդ ըլլայ մարդկային թէ նիւթական:

Հայ դատը միայն մէկ կուսակցութեան ճիտին պարտքը չէ: Համայն հայութեան պարտականութիւնն է անոր հետապնդումը: Եւ միայն Սփիւռքի ուսերուն չի ծանրանար: Հայաշխարհի՛ բեռն է, որ պիտի տանինք բոլորս միասին:

Ամենէն առաջ, սակայն, պէտք է հաւատալ, որ ԴԱՏ ունինք:

Այլապէս ոչ կրնանք ազդել, ոչ ալ հակազդել, այլ միայն ազդուել...

ՎՐԷԺ-ԱՐՄԵՆ

Հայոց իսլամական աշիրաթը

Ծորն Արելեան

Գամիշլի քաղաքէն ճամբայ կ'ելլենք այցելելու համար մեզի ընկերացող տոքթ. Կարօ Հեքիմեանի քրտացած զարմիկին: Ծամբան բաւական երկար է, բայց հարթ ու շիտակ: Քաղաքէն մինչեւ Ռաս Ուլ Այն, ճամբան գուզահեռ կ'ընթանայ Սուրիա-թրքական սահմանին: Մերթ այնքան կը մօտենայ սահմանին, որ աշտարակներուն վրայ կանգնած թուրք զինուորներուն դէմքի գիծերը բաւական յստակութեամբ կը տեսնուին: Փշաթելէ ցանկապատ մը կը զատէ երկու երկիրները:

Մերթ ընդ մերթ, ճամբուն երկայնքին կը նշմարենք փոքր աղջնակներ, որոնք ամայի տարածքներուն վրայ կը քայլեն:

- Ասոնք դպրոց չեն երթար, հարց կու տայ Անին:
- Անշուշտ կ'երթան, բայց դպրոցէն ետք դաշտերը կ'երթան ոսպ կամ սիսեռի թուփերը քաշելու եւ հաւաքելու, կը պատասխանէ երիտասարդ բժիշկը:

Ինքնաշարժին հանգստաւէտութեան կը հակադրեմ դուրսի կիզիչ անապատային ընդարձակ տարածքներուն: Այդ տարածքներուն վրայ շուրջ մէկ դար առաջ, քալած են իմ ազգիս մնացորդները: Անօթի, ծարաւ, ոտաբոստիկ եւ հիւսած, ինչպէ՞ս կը քայլէին անոնք: Ռաս Ուլ Այնի մէջ կոտորուածը կոտորուած էր, մնացեալները կը քուլէին դէպի հեռաւոր Տէր Զօր՝ ատոնց հաշիւը վերջնականօրէն փակելու համար: Դուրսը, մերթ ընդ մերթ, պատահող ոսպ կամ սիսեռ հնձելու գացող աղջիկները որքան բախտաւոր են... Կօշիկ ունին գոնէ, սովահար չեն կամ հիւսած:

Այն օրերուն թուրք զինուորը պահակութեան աշտարակին վրայ կանգնած, այսօրուան արձանանման եւ բարեկիրթ զինուորին երեւոյթը չունէր: Արիւնարբու, գազազած հրէջ էր՝ ինկած անտէր ոչխարի հօտին վրայ: Իրեն «կ'օգնէին» քիւրտ, չեչեն եւ չերքէզ հրոսակներ եւ թալանչիներ... Այս օրերուն այս ընդարձակ տարածութիւնները լուռ ու հանդարտ են:

Մերթ կ'անցնինք մեծ թէ փոքր գիւղերու մէջէն: Բժիշկ Կարօն դիտել կու տայ.

- Հոս, այս գիւղին մէջն ալ հայեր կան, քրտացած հայեր:

Ի՞նչ ըսել կամ ընել: Աշխարհէն այնքան մեկուսացած, գրեթէ լրիւ կտրուած, այդ վայրերուն մէջ ի՞նչ հայ: Իրենց պապերը պարտադրուած են լքել իրենց գեղածիծաղ հայրենիքը եւ եկած հաստատուած են հոս: Անշուշտ հող հաստատուածները բաւական բախտաւոր եղած են: Ուրիշներ ողջ մնալու առիթն իսկ չեն ունեցած:

- Սա Ամուտա գիւղն է կամ քաղաքատիպ աւանը: Հոս ալ բաւական քրտացած հայեր կան:

- Ամուտան, անցնող դարու 60-ական թուականներուն նշանաւոր դարձած էր, որովհետեւ շարժանկարի սրահը այրած էր կամ հրկիզուած: Ներկաները, բոլորն ալ դպրոցա-

կան աշակերտներ, այրած եւ ածխացած էին: Ահաւոր ողբերգութիւն էր այդ. անկէ առաջ ալ մեր ազգակիցներուն ողբերգութեան մէկ մասը հոս բեմադրուած էր: Աստուած իմ:

Բաւական քշելէ ետք, վերջապէս կը հասնինք Ռաս Ուլ Այն: Մեզի ըսուած էր, որ հոն նշանաւոր ճաշարան մը կար, ճաշարան Սերոբ: Ես կապուած էի այդ մարդուն հետ. ըսուած էր, որ բաւական հետաքրքրական պատմութիւն ունէր իր հօր մասին: Մարդը չէր յօժարած պատմել մեզի: Իսկ մենք ճաշելու ո՛չ սիրտ ոչ ալ ժամանակ ունէինք: Ուղղուեցանք Մոհամէտ Մահմուտի տունը:

Բարձրահասակ Մահմուտ ներս առաջնորդեց մեզ: Օտար ինքնաշարժը շարժած էր հետաքրքրութիւնը ոչ միայն դրացիներուն եւ փողոցի լաճերուն, այլ նաեւ պատկան շրջանակին: Տանտէրը ապահովցուցած էր, որ անվնաս մարդիկ էինք: Անցանք ներս: Երկար եւ ընդարձակ հիւրասրահ մը, զոյգ բաժանումներով՝ արեւելեանը բազմոցներով եւ բարձերով կահաւորուած, իսկ «արեւմտեան» բաժինը կահաւորուած էր թիկնաթոռներով: Հազիւ նստած, մեր զարմանքը չենք կրնար զսպել. պատին վրայ կախուած է Մեծն Տիգրանի հարթաքանդակը, Հայկական Եռագոյն վզնոց մը եւ հայկական այլ նկարներ: Ի՞նչ գործ ունէին ատոնք հող, քրտացած Յովհաննէս Հեքիմեանի որդի՝ Մոհամէտի հիւրանոցին պատին վրայ:

Մոհամէտի երեսին վրայ հեզնական ժպիտ կայ, ի տես մեր զարմացումին:

- Մեր արիւնը հայո՛ւ արիւն է,- կը շեշտէ՞ Ինչպէ՞ս չհաւատայ:

Կ'ուզէ իմանալ մեր այցին նպատակը: Իր զարմիկը՝ բժիշկ Կարօ, բացատրած է իրեն, բայց մեզմէ կ'ուզէ լսել: Կը բացատրեմ: Գլուխը կը շարժէ:

- Ուրախ եմ, որ եկաք. մեզմով հետաքրքրուող չկայ. ո՛չ Հայաստանի պետութիւնը, ո՛չ ալ եկեղեցին: Մենք լուսանցքի վրայ ապրող մարդիկ ենք. ոչ հայր կ'ընդունի մեզ, ոչ ալ՝ քիւրտը: Դիմեցինք Հայաստանի պետութեան. բան չստացուեցաւ: Դուք եկեր էք մեզմով հետաքրքրուելու. շնորհակա՛լ ենք:

Օրինակ մը կը նուիրեմ իրեն իմ «Ցիւեանս Նահատակութիւն» գործին արաբերէն հրատարակութիւնէն:

- Ասիկա մեր Սալման Տրպուն է,- կը բարձրաձայնէ Մոհամէտ Մահմուտ:

- Կը ճանչնա՞ս զինք:
- Անշուշտ: Իր տղան հոս կը բնակի:
- Կը կարգադրէ, որ կանչեն իրենց դրացի կին մը:
- Այս վերջինը երբ ներս կը մտնէ ու կը տեսնէ գիրքը, ուղղակի կ'ապչի:
- Ասիկա,- գիրքին կողքին նկարը ցոյց տալով կ'ըսէ,- ասիկա իմ մեծ հայրն է, Սալման էլ Տրպուն: Մեր գերդաստանի բոլոր ընտանիքներու տուններուն մէջ կայ այս

նկարը: Այլա՛հ:

Հայրը՝ Խալաֆ, որդին հաճընցի Քեքլիկեան Արամ-Սալման Տրպոյի քաղաքէն դուրս կը գտնուի: Արամի որդու լոյն եւս օրինակ մը կը մակագրեմ եւ կու տամ աղջկաս: Շատ գոհ կը մնայ: Ամբողջ տեսակցութեան ընթացքին մեզի հետ կը մնայ: Յայտնի էր, որ բաւական ազատամիտ էր: Այրերուս հետ կը ձեռնուի եւ ազատորէն կը խօսի:

- Ես Մահմուտ կ'ըսեմ, եկած ենք տեղեկութիւն հաւաքելու քեզի պէս մարդոց մասին: Ի՞նչ պիտի պատմես մեզի քու հօրդ մասին:

- Ինչ որ գիտեմ, շատ սիրով, պիտի պատմեմ: Հայրս Յովհաննէս Հեքիմեան մշտնջեղ եղած է: Մուշի Կեղեցի գիւղէն: Մուշէն քշուելով հոս բերուած եւ հոս ալ մնացած է: Այդ օրերուն եղած է փոքր տղեկ մը: Այդ օրերուն եղած է փոքր տղեկ մը: Հոս շատ հայեր կոտորուած են: Զարդարարները, առաւելաբար, եղած են քիւրտեր եւ չեչեններ: Թուրքէն աւելի ասոնք ջարդած են մեր ազգակիցները: Ռաս Ուլ Այնը ահաւոր կոտորածներ տեսած է: Աստուած պատիժը տայ անօրէն ջարդարարներուն եւ անոնց հրաման տուողներուն՝ թուրք ղեկավարներուն:

- Ո՞ր գիւղէն կամ քաղաքէն եղած է հայրդ, Մահմուտ:

- Հայրս Մուշի շրջանի Կեղեցի գիւղէն է: Ծնած է 1908-ին: Ունեցած է Անդօ եւ Աւետիս անունով եղբայրներ: Անդօն Ալթուն կը կոչեն եղբր: Ունեցած է երկու քոյր Սրբուհի եւ Ազնիւ: Հօրս երկու քեռիները՝ Տիգրան եւ Ղազար, Հալէպ կ'աշխատին եղբր: Դրամ կը խնայեն եւ կը տանին Մուշ: Իսկ հօրս հօրեղբորորդին՝ Մկրտիչ, կը փախչի թրքական բանակէն:

Հայրս մէկ տարի դպրոց կը յաճախէ: Իսկ հազիւ 7 տարեկան, կը ստիպուի գաղթել իր հարազատներուն հետ: Երբ Մարտին քաղաքը կը հասնին, ինք հոն կը մնայ: Մայրն ու մեծ մայրը կը յանձնեն զինք ցեղախուժքի մը, այդ ձեւով կեանքը փրկելու համար: Իրենք կ'երթան դէպի հեռուն: Մինչ այդ, Յովհաննէսի քրոջ երեսը կը ցեխոտեն: Թուրք սպան կ'առեւանգէ աղջիկը ու կը տանի: Անկէ ետք ո՛չ մէկ լուր ունեցած են անկէ:

Զարգէն 4-5 տարի ետք, լուր կը հասնի Յովհաննէսին, որ մայրը ողջ է տակաւին, եւ թէ տեսնուած է շրջանին մէջ: Այս լուրը որոշ յուզումով եւ յոյսով կը լեցնէ տղան, որ արդէն բաւական մեծցած էր այլեւս:

Յովհաննէսի մայրը ուրիշ մարդու հետ ամուսնացած է: Գաղթի չհլած ան ընտանիքին ոսկիները կարած է ժաքէթի մը մէջ: Այդ ժաքէթը մնացած է իր մօտ: Նոր ամուսինը միշտ կը պնդէ, որ ոսկիները մէջտեղ հանէ կինը: Ան կը մերժէ:

Ամուսինը կ'առաջարկէ, որ երթան տղան՝ Յովհաննէսը, գտնեն եւ այցելին անոր: Երբ ճամբայ կ'ելլեն Յովհաննէսի ապրած գիւղը երթալու համար, իրենց տղուն հետ, ամուսինը կը պահանջէ, որ կինը ոսկիները մէջտեղ հանէ: Կը խոստանայ այդ ոսկիներով հանգիստ եւ լաւ կեանք մը ապահովել ընտանիքին: Կինը կը մերժէ: Ամուսնոյն պնդումները արգիւնք չեն տար: Հաւանաբար կինը՝ մեծ մայրս, վստահութիւն չունէր երկրորդ ամուսնոյն վրայ: Ատոր համար կը մերժէ ոսկիները յանձնել անոր:

Ամայի տեղ մը կը հասնին: Ամուսինը դարձեալ կը պահանջէ, որ կինը ոսկիները մէջտեղ հանէ: Կը սպառնայ տղան մեռցնել: Երբ կինը կը մերժէ, մարդը կը սպաննէ թէ՛ կինը, եւ թէ՛ իր հարազատ տղան:

Յովհաննէս, որ այլեւս Իպրահիմ կը կոչուէր, երեք օր ետք կ'առնէ իր մօրը սպանութեան լուրը: Իր ընկերոջ հետ ոչխար կ'արածէր: Միասին կ'երթան եւ կը տեսնեն, որ կնոջ

եւ տղուն գլուխները եւ ոտքերը միայն մնացած են: Գագանները կերած էին զանոնք: Յովհաննէսի համար մեծ ցնցում էր տեսնել մօր մարմինն մնացորդները:

Անկէ ետք Մարտինէն կը փախչի ու կ'անցնի Սուրիա: Այդ փախուստը դիւրին չէ եղած: Գիւղէ գիւղ տեղափոխուելով վերջապէս կը հասնի սուրիական հող, Գամիշլիի շրջան: Կը հասնի Ռաս Ուլ Այնի շրջանը: Բնակութիւն կը հաստատէ Մրէքի գիւղը: Հող ուրիշ հայեր ալ կային: Անոնց հետ կը յարաբերի:

Ինք ամուսնացած էր Խանսա անունով քրտու կնոջ մը հետ: Ունեցած են չորս աղջիկ եւ չորս տղայ: Ես անոնց անդրանիկն եմ: Իմ եղբայրներս բոլորն ալ շրջանին մէջն են: Քեզի պիտի տանիմ մեր գիւղը: Ես հոս՝ Ռաս Ուլ Այն եկայ հաստատուեցայ դպրոցի գիւրութեան համար: Հոն՝ Մրէքի գ, դպրոց չկայ:

Ինք՝ Միհրան կամ Մոհամէտ, թեւտ է: Զախ թեւը, գրեթէ ուսէն, չկայ: Առանց իմ հարցումիս, ինքը բացատրութիւն կու տայ ըսելով.

- Ինչպէս կը տեսնէք, մէկ թեւս չկայ: Շատ փոքր էի, միայն եօթը տարեկան: Գետեզերքը հովով բանող ջրհան մը կար: Մանկական անզգուշութեամբ հովանիւին անցաւ թեւս: Ահաւոր բան էր: Ամբողջ թեւս քաշեց: Լաւ որ զիս ալ չազաց: Ապրելու բախտ ունիմ եղբր:

Երբ ես, ի նշան ցաւի, երեսս կը պրկեմ, ինք կը հանդարտեցնէ զիս:

- Կրնար ամբողջ մարմինս աղալ այդ անպիտան հովանիւր: Բարեբախտաբար մեծ չէր:

- Որքա՞ն տառապեցար:

- Այդ բոլորը մոռցած եմ: Հակառակ միաթեւ ըլլալուս, միտքս դրի խարատագործութիւն (թոռնոճիութիւն) սորվիլ: Գիտես, այդ գործը շատ նրբութիւն կը պահանջէ: Հակառակ ամէն բանի, սորվեցայ եւ դարձայ վարպետ խարատագործ: Մի՛ մոռնար, որ երակներու մէջի արիւնը հայու արիւն է... Հիմա խարատի աշխատատեղին տղաքս կը դարձնեն, համտուլիւհաս...

- Քանի՞ տղայ ունիս, Միհրան:

- Աստուծոյ տուած տղաքը հինգ հատ են: Փա՛ռք Աստուծոյ: Մեծը Իպրահիմ կամ Աբրահամ է: Ան հեռացաւ այստեղէն եւ Եւրոպա գնաց: Հիմա Հոլանտա հաստատուած է: Հոն քրիստոնեայ դարձաւ: Թէ՛ ինք եւ թէ՛ զաւակները մկրտուեցան: Երկու տղոց անուններն են Սեւակ եւ Տարօն: Հապա՛: Բայց այլեւս մեր այս կողմերը բնաւ չի կրնար գալ, կը հասկնա՞ս. քրիստոնեայ դարձաւ:

Երկրորդ տղաս էմիրն է: Սա չորս աղջիկ ունի: Շատ սիրունիկ աղջիկներ են: Երրորդը Աբրահամ է: Չորրորդը՝ Այտին կը կոչենք, բայց ինք Վրէժ է: Վերջին զաւակս, Արման, այսինքն Արմէն, բանակին մէջ կը ծառայէ, որպէս պարտադիր զինուոր: Նշանուած է:

Մինչ այդ ներս կը մտնեն էմիրի աղջիկները: Իսկապէս իրաւունք ունէր իրենց մեծ հայրը անոնց գեղեցկութեամբ հպարտանալու: Կոկիկ հագուած սիրունիկ աղջնակներ են:

- Ես ախ ճօրճ, կ'ըսէ: Չե՛ս հարցներ ասոնց անունները: Ես ընեմ քեզի. մեծը՝ Նանոր, ասիկա է. երկրորդը՝ Նայիրի, հոս է. երրորդը՝ Արմինէն, իսկ սա չարուկը, չորրորդը՝ Մենարն է: Գեղեցի՞կ են, այսինքն իրենց անունները:

Ի տես այդքան գեղեցիկ եւ այնքա՞ն հայաբոյր անուններուն թէ՛ ես եւ թէ՛ ընկերակիցներս շշմած ենք: Պահ մը խօսք չենք գտներ: Այդ աղջնակները մշտնջեղ Յովհաննէս Հեքիմեանի ծոռուհիները, Ռաս Ուլ Այնի մէջ ծնած եւ մեծցող, հակառակ իրենց սիրուն անուններուն, ի՞նչ պիտի ըլլան

Հող: Քանի մը վայրկեան պէտք կ'ըլլայ ես գիտնելու համար: Թո՛ւմ, որ ստանձնած է նկարելու պարտականութիւնը, երախաները կը նկարէ իրենց մեծ հօր եւ մեծ մօր հետ: Ապա, երբ քիչ վերջ տեղ երթալու համար կը շարունակ իրենց հօրեղբօր մեծ մոթոսիքէն վրայ, դարձեալ կը նկարէ գիրենք: Անուշիկ աղջնակներ, սքանչելի անուններով, ի՞նչ սպազայ պիտի ունենան... Անոնք կը կրեն 94 տարի առաջ իրենց ազգին դէմ ի գործ դրուած ահաւոր ցեղասպանութեան հետեւանքները: Կ'ապրին ճիշդ հոն, որ վերածուած էր ահաւոր սպանդանոցի: Մէկ կողմէ թուրքին տրուած բարձրագոյն ՈԶ է իրենց գոյութիւնը, այդքան հմայիչ անուններով, իսկ միւս կողմէ՝ իրենց սպասող սպազան, մտահոգութեամբ կը պատէ մեզ...

- Իմ աղջիկս ալ Մենար կը կոչուի, կը բացատրէ բժիշկ Կարօն:

- Իսկ ի՞նչ է իմաստը այդ անունին:
- Արաբերէնի Ֆերիտան է այդ. եզակի... Հայաստանի մէջ եւս գործածական անուն է: Իմ հայաստանցի կինը դբաւ աղջկաս անունը:

Հասկնալի էր, թէ ուրկէ՞ գտած էր Էմիր իր չորրորդ աղջնակին անունը...

- Էմիր, կը շնորհաւորեմ քեզ: Շա՛տ սիրուն աղջիկներ ունիս: Աստուած պահէ գիրենք: Եւ որքա՛ն սիրուն անուններ դրած ես իրենց. ապրի՛ս:

- Մենք հայ ենք, հակառակ ամէն բանի: Ես շատ ուզեցի մեր հայոց լեզուն սորվիլ: Պէտքովէն մասնաւոր գիրք բերել տուի: Առանց օգնականի չկրցայ սորվիլ: Որքա՛ն կը փափաքեմ պատուկիս լեզուն սորվիլ, բայց չ'ըլլա՛ր:

Յոյց կու տայ «Շիրակ»ի հրատարակած հաստատիր գրողատուութեան գիրքը: Ափսո՛ս, որ Էմիրի շրջապատին մէջ օգնող մը չկա՛յ...

Էմիր կու տայ իր բլիթային հեռաձայնը: Կարծէք հաստատելու համար, որ հայտնութիւնը իրեն համար վերացական բան մը չէ: Հոն՝ հեռաձայնին մէջ, գետեղած է հայկական այնպիսի նկարներ, որոնք վայել են թթու հայորդիներու: Եռագոյն, Լիզպոնի 5 տղաքը, կուսակցութեան եւ ՀՄԸՄ գինանշաններ եւ այլն... «Տեսէք,- կ'ըսէ,- եւ կը կազմէ թիւ մը. արդարեւ հեռաձայնի առաջին նկարը, որ գծանկար մըն է եւ եռագոյնով փաթթուած, հեռաձայնին զանգին հետ, ամենայն «վարպետութեամբ» թիրախ կը բռնէ թրքական դրօշակը եւ առատօրէն կը միզէ վրան...- տեսա՞ք...- Կրնայի՞նք չտեսնել... Թրքական սահմանին վրայ ինկած Ռաս Ու Այնի մէջ, հաւանաբար բնագոյնաբար, Էմիր իր մեծ հօրը վրէժը կը լուծէ, այդ գծանկարով...

- Էմիր, այս բոլորը ուրկէ՞ գտած ես:
- Հայէպէն: Այնտեղի հայ երիտասարդներ տուած են ինծի այս նկարները: Լաւ են չէ՞:

Խօսք կ'ուզէ՞...

- Ախ ձօրձ, չմոռնաս կինս ալ հայու աղջիկ է: Կը յուշէ Էմիրի հայրը՝ Միհրան:

Քրտական տարագով եւ նիստ ու կացով Էմիրան, այնքան մտերմութիւն ցոյց կու տայ, որ դժուար էր ըմբռնել: Իսլամ կին է, լաչակաւոր, բայց երբ քովս կը նստի, ուղղակի կը կպի ինծի: Նկարուելու ատեն երբ ձեռքս կը դնեմ ուսին, բնաւ չի փորձեր հեռանալ: Եւ ինքիւրեն ազատութիւն տուած է խօսելու, խնդալու եւ պատմելու: Չէ որ իր «հարազատ»ներն ենք մենք...

- Էմիրնա, պատմէ՛ տեսնենք. ո՞վ է հայրդ. ուրկէ՞ է:
- Հոն է հայրս,- ցոյց կու տայ պատէն կախուած հօր նկարը: - Հայրս ալ մշեցի է, Եղիա Միսոյեան: Վերջը անունը եղած է Մոհամէտ Իսա Մահամիտ: Զարդի ատեն եղած է եր-

կու տարեկան:

Մինչ այդ ներս կը մտնէ Էմիրայի եղբայրը՝ փաստաբան Ապուէլ Ռահան Մոհամէտ Իսա Մահամէտ: Միջին տարիքէ վեր, բաւական «պարարտ» մարդ մըն է: Քոյր-եղբայր կը պատմեն իրենց հօր մասին:

Եղիա Միսոյեան ունեցած է Արսէն անունով եղբայր մը, որ 7 տարեկան եղած է եղեւնի շրջանին: Էմիրայի մեծ հօր անունը եղած է Օհան: Քառասուն անդամ ունեցած է Միսոյեան ընտանիքը: Ունեցած են ընկուզենիներ եւ ջրաղաց:

Եղիայի մէկ եղբայրը՝ Աբօ, քրտացած է եւ կ'ապրի Պիթիս: Խալիլ անունով մէկ եղբորորդին Մարտինի կողմերը Գրզլ Թէփէ կոչուած վայրը կ'ապրի: Չորս տղաք ունի՝ Մոհամէտ, Ապուէլ Քատէր, Ալի եւ Օմար: Ասոնք թրքերէն եւ քրտերէն կը խօսին: Խալիլ մեռած է: Եղիան ալ մեռած է 2008-ին:

Զարդի ընթացքին, Սօսի անունով քոյրը, գրկած է երկու եղբայրները: Ուրիշ քոյր մը կ'առեւանգեն: Տղոցմէ մէկն ալ առեւանգուած է: Սօսին, իբր թէ ջուր բերելու կ'երթայ. կը նետուի ջուրին մէջ եւ կը խեղդուի, որպէսզի չառեւանգուի եւ թուրքի կամ քրտերի կին չգառնայ:

Եղիա Միսոյեան իր վարպետին ուղտերը կ'արածէ: Կը հանդիպի ուրիշ պատանի հովիտի մը, որ իր կարգին իր վարպետին ուղտերը կ'արածէ: Երկրորդ պատանին պետեւի է: Կը բարեւեն եւ խօսակցութեան կը բռնուին: Պետեւի տղան կ'ըսէ, որ ինք հայ է ծագումով: Եղիան ալ կը յայտնէ, որ ինք եւս հայ եղած է: Երկու տղոց միջեւ նմանութիւնը շատ ակներեւ եղած է: Ի յայտ կու գայ, որ քրտաց եւ պետեւի երկու տղաքը եղբայրներ են: Այս մէկը կը հաստատուի մէկուն փորին, իսկ միւսին ուսին վրայի խալերով... Տարիներու բաժանումէն ետք, երկու եղբայրները գիրար կը գտնեն անապատին մէջ, տարբեր շրջապատի մէջ տարբեր ցեղային պատկանելիութիւն հագած:

Էմիրնա կը յայտնէ, որ հօրեղբայրը Հասան Շիհա, Թուրքիոյ մէջ ամուսնացած է եւ հոն ալ կ'ապրի: Հօրեղբայրը իր ողիտականը պատմելու կը վախնար:

Իսկ Եղիան կամ Մոհամէտ Մահամիտ, բնակութիւն հաստատած է Գամիշլիի եւ Ռ. Ու Այնի միջեւ գտնուող գիւղի մը մէջ՝ Պսիս: Այդ գիւղը Ռ. Ու Այնէն միայն 30 քմ. Հեռաւորութեան վրայ է:

1948-ին Եղիա կ'ամուսնանայ արաբ կնոջ մը հետ, Ապթա անունով: Այս կինը կ'ունենայ երկու տղայ եւ հինգ աղջիկ: Եղիա երկրորդ կին մըն ալ կ'առնէ: Այդ կնոջմէն կ'ունենայ եօթը աղջիկ եւ մէկ տղայ: Այս երկրորդ կինը Էմիրայի ամուսնոյն, այսինքն Մոհամէտ Մահամիտի (Միհրանի) քոյրն է: Եղիայի երկու կիներն ալ ողջ են եւ նոյն գիւղին մէջ կ'ապրին:

Էմիրնա յաճախ կը կրկնէ, որ ինք շատ կը սիրէ հայերու հետ յարաբերիլ: Իսկ մեզի հետ հանդիպումը երջանկացուցած էր զինք:

- Միհրան,- հարց կու տամ,- ինչպէ՞ս կ'ըլլայ, որ քու հայրդ քրտացած է, իսկ քու հօրեղբորորդին՝ տոքթ. Կարօն հայ մնացած է:

- Անոր հայրը հայկական շրջանակի մէջ մնացած է: Բայց ան ալ քրտերէն կը խօսի միայն: Կարօն ալ Հայաստան ուսանած է:

- Լաւ, գիրար ինչպէ՞ս գտաք: Հետաքրքրական ըլլալու է:

- Անշուշտ շատ հետաքրքրական է: Ես 1972-ին շէյխ Ազրտտին Էլ Խազնաուէիին մօտ աշխատելու գացի: Զուրի 24 ջրհան մոթորներուն պատասխանատուն էի: Միեւ-



Մոհամէտ Մահմուտի (Միհրան)

նոյն ատեն Միքայէլ Արծրունի անունով մարդու մը մեքենաները կը նորոգէի: Այս մարդուն հետ մնայուն կերպով վէճի մէջ էինք: Ես իրեն թեքնիք ուղղութիւն կու տայի: Սա ըրէ, նա մի ընք ըսելով, միշտ ըսելիք ունէի իրեն: Ինք թէ՛ կը զարմանար եւ թէ՛ ալ շատ էր հաւատար ինծի: Կը կարծէր ու կը հաւատար, որ քիւրտը միմիայն էշ կրնայ ըլլալ եւ բանէ չի հասկնար: «Բոլոր աշխարհը էշ է, միայն դո՛ւն ես հասկցող», կ'ըսէր ինծի: Ես թէեւ կ'առնուէի, բայց բուն ինքնութիւնս չէի բացայայտեր իրեն:

Օր մը, աշխատած վայրէս քիչ անդին, տեսայ խանութի մը վրայի ցուցանակը՝ Անդրանիկ Հեքիմեան: ,Աղահ ըսի մարդուն, «կը տեսնե՞ս այդ ցուցանակը: Ես ալ Հեքիմեան եմ»: Միքայէլ ափ ի բերան մնաց: Գացի եւ հարցաքննեցի այդ խանութին տէրը: Ի յայտ եկաւ, որ ան ալ մշեցի էր: Անմիջապէս չյայտնեցի, որ ես ալ իր գիւղէն, կեղեցի եմ: Ձէի ուղեր խրտչեցնել զինք: Վերջապէս ես քիւրտ էի, ան՝ հայ: Թէեւ այլեւս համոզուած էի, որ այդ մարդը ազգական էր, կ'ուզէի վստահ ըլլալ հարիւր առ հարիւր: Դիմեցի Ռաս Ուլ Այնի եկեղեցին: Տոմարներէն կրցայ ստուգել, որ ազգական ենք Անդրանիկ Հեքիմեանի հետ: Նոյն գիւղէն երեք ուրիշներ ալ կային շրջանին մէջ: Երբ վերջապէս յայտնեցի, որ մենք ազգականներ ենք, մարդը նախ զարմացաւ: Յետոյ յուզուեցաւ: Իր դիմաց կանգնած էր քիւրտ մը, որ հօր կողմէ ազգական էր իրեն: Երբ բացատրեցի ամէն բան, մարդը եւ իր պարագաները համոզուեցան: Նստանք քեֆի: Բաւական ու-

րախանայէ ետք, հրաւիրեցի զիրենք մեր տունը՝ Ռաս Ուլ Այն: Ամբողջ 5 օր ոչխար մորթեցինք, կերանք, խմեցինք, քեֆ ըրինք: Պատմեցինք հինէն նորէն: Աքանչելի միջնորդա էր: Հօրս իսկական ազգականները գտնելը իմ տարիներու երազը եղած էր: Այդ երազը իրականացած էր:

Փամանակին հայրս ուղած էր իր հօրեղբայրները՝ Ղազարն ու Տիգրանը, գտնել: Դիմեցինք Հայէպ հայոց եկեղեցին: Շատ պրպտեցինք, յայտարարութիւններ դրինք եկեղեցիներուն մէջ: Բայց չգտանք զիրենք, ափսո՛ս: 1958-ին էր այդ:
- Իսկ հիմա, ինչպէ՞ս են քու եւ հայ ազգականներուդ յարաբերութիւնները:

- Շատ լաւ: Ես քիւրտ, իսլամ. անոնք հայ եւ քրիստոնեայ: Սակայն նոյն արիւնն է մեր երակներուն մէջ: Մենք մշեցի ենք, մշեցի՛... Տեսա՞ր. տոքթ. Կարօն ինքզինք որբա՛ն տնեցի կը զգայ:

Այդ պահուն տոքթ. Կարօ խոհանոցին մէջ կլկլակ մը կը պատրաստէր ինքնիրեն համար:

- Միհրան, ուրախ եմ ատոր համար: Դուք մեծաւոր կամ բան մը չունի՞ք:

- Անշո՛ւշտ ունիինք: Ո՞վ ըսաւ, որ չունինք: Մենք ունինք մեր աշիրաթը, հայոց աշիրաթը:

- Ի՞նչ կ'ըսես, Միհրան:

- Քեզի ցոյց տամ,- ըսելով, կը բանայ ձեռքի պայուսակը: Մէջէն կը հանէ թուղթեր: Մէկ մասը այդ թուղթերուն ցանկեր են: Կը կարդամ: Քրտական անուններ, ընտա-

նիքի անդամներու թիւ, արձանագրութեան (սըճըլ) թիւ: Բնակավայրի հասցէ, ստորագրութիւն՝ ընտանիքի մեծաւորի: Իւրաքանչիւր թերթի վրայ 10-11 անուկ կայ:

- Ասոնք տախտակներն են մեր աշիրաթի անդամներուն: Տեսա՞ր: Յետոյ, մեր աշիրաթը ունի իր կանոնագրութիւնը: Մենք շատ հոգ կը տանինք, որ ամուսնութիւնները խառն չըլլան: Եթէ մէկը աշիրաթէն դուրս աղջիկ պիտի առնէ, հարկ է, որ յատուկ հրաման առնէ մեր շէյխէն: Բոլոր այրերը՝ 15-70 տարեկան, տարեկան անդամավճար կու տան: Այդ սնտուկէն կը հոգացուին ստիպողական պարագաներ: Օրինակ, եթէ մեր աշիրաթէն մէկը արկած ունենայ, մէկու մը զարնէ, մեր սնտուկէն կը վճարուի դիմացիսին հատուցումը:

- Ո՞վ է ձեր շէյխը:
- Տես, հոս գրուած է. մեր շէյխն է Էլի Յովակիմեան:

Աստուած պահէ զինք:

- Միհրան, ինչո՞ւ կազմուած է այս աշիրաթը: Նպատակը ի՞նչ է:

- Շատ պարզ է: Այս շրջանին մէջ տիրապետող է աշիրաթական դրութիւնը: Ամէն մարդ իր թիկունքին ունի աշիրաթ մը: Եթէ աշիրաթի մը չես պատկանիր, ուրեմն դուն ոչինչ ես: Ձեռնքալ քու իրաւունքներդ պաշտպանել:

- Լաւ, մե՞ծ է ձեր աշիրաթը: Ե՞րբ հիմնուած է:
- Մեր աշիրաթը հիմնուած է 1998-ին: Մարդահամար ըրինք, յետոյ հիմնեցինք զայն:

- Չպատասխանեցիր հարցումիս. քանի՞ անդամ ունի այս ցեղախումբը:

- Ըսեմ ձօրճ եղբօրս. մեր աշիրաթը ունի 25,000 անդամ: Բաւական մեծ թիւ է:

Ես պարզապէս ափ ի բերան կը մնամ: Այդքան մեծաթիւ հայորդիներ, աշիրաթի մը հովանիին տակ կազմակերպուած եւ զարգացած հաղորդակցութեան ներկայ օրերուս, մենք լուր իսկ չունինք:

- Տեսա՞ր: Այս աշիրաթը կը կոչուի Հայոց իսլամական աշիրաթ: Իսլամ ենք մենք, բայց հայ:

- 25,000 անհատ, թէ՞ ընտանիք...
- Ո՛չ, ո՛չ, անհատ: Քրտացած եւ պետեւի հայորդիներ ենք մեր աշիրաթին մէջ: Իսլամ ենք, բայց հայ ենք:

- Շրջանի բոլոր քրտացած հայերը անդամ են այս աշիրաթին:

- Ո՛չ: Մեծ թիւ մը կայ, որ չէ միացած մեզի:

Միհրանի աներձագը՝ Ապտէլ Քատեր զրոյցին մէջ կը մտնէ՝ ըսելով. «Մեր աշիրաթի անդամ հայ փաստաբաններս ունինք որոշ կազմակերպութիւն: Մենք կը ներկայանանք որպէս իսլամ հայ»:

Մայիսեան այդ յետմիջօրէն ուղղակի շրջանցուած էր զիս: Կորսուած հայորդիներու յետնորդներ՝ ո՛չ միայն յիշատակ կը պահեն իրենց ծագումին մասին, այլ նաեւ կազմակերպուած են որպէս իւրայատուկ համայնք: Իսլամ են, բայց ՀԱ՛Յ կը զգան իրենք զիրենք...

Միհրան կը դասաւորէ, որ իր զաւակները մեզի պտոյտի տանին: Կ'երթանք դէպի իսպուր գետ: Այս գետը Եփրատի գլխաւոր հարկատուն է: Ժամանակին անոր ափերէն քալած են աքսորական հայորդիներու կարաւաններ: Ջուրին կողքէն քալելով հանդերձ, ծարաւ մնացած են, երբեմն օրերով: Գետին մօտեցողները եւ ջուր խմելու փորձ ընողները պարզապէս հրուելով ինկած են գետին մէջ եւ խեղդուած: Իսկ ո՞վ պիտի կարենայ հաշուել, թէ քանի-քանի՞ հայուհիներ իրենք զիրենք այդ գետին մէջ նետելով վերջ դրած են իրենց մատղաշ կեանքերուն: Երբ կը հասնինք գետափ, կը զարմանանք: Յամբած է նշանաւոր իսպուրը: Թուրքիոյ մէջ կառուցուած ամբարտակները կը սպառնան ծարաւ թողուլ

Սուրիան եւ Իրաքը:

«Իսպուր գետ, կ'անցնի մտքէս. արդեօք քու մէջ նետուած հայուհիներուն անէծքը չէ՞, որ քեզ ցամբեցուցած է»...

Կը մտնենք յոյն ծագումով նախկին աւատատիրոջ մը լքուած դղեակը: Դղեակին կից կայ հսկայ ջրանցք, որ ցամաք է:

- Մինչեւ հարիւրաւոր քիլօմեթր անդին ջուր կը տարուէր այս տեղէն: Հիմա ցամաք է,- կը բացատրէ Ապտէլ Քատէր փաստաբանը:

Միհրանի տղաքը ցոյց կու տան չորս ջրհան մեծ շարժակներ՝ ժանգոտած եւ լուռ մնացած 1960-էն առդին, երբ պետութիւնը ազգայնացուցած է հսկայ կալուածը: Այդ ջրհանները ջուր մղած են ցամաքած մեծ ջրանցքին մէջ: Աւելի վարը, պետութիւնը երկու նոր ջրհաններ հաստատած է, ջրհորներէ ջուր քաշելու, ցամաքած գետը վերակենդանացնելու նպատակով...

Շատ տխուր բան մը կայ միջուորտին մէջ: Յամբած գետ. լքուած երբեմնի շէն դղեակ: Հայկական ծագումով պահակ...

Եւ յիշատակը հարիւրաւոր, թերեւս հազարաւոր, ջրամոյն եղած պատուախնդիր հայուհի պարմանուհիներու: Կը հեռանանք այդ վայրէն: Մեր դիմաց կ'ելլէ Միհրան:

- Ընթրիքի կարգադրութիւն տեսայ: Ծաշարան Սեբրը պիտի երթանք: Եթէ կանուխէն իմանայի ձեր գալուստը, երկու-երեք ոչխար կը մորթէինք: Այս այցելութիւնը չեղա՞ւ: Հարկ է, որ նորէն գաք: Հիմա պիտի երթանք մեր դիւղը:

Մեր առարկութիւնները, որ այլ ժամադրութիւններ ունինք Գամիշլիի մէջ, անօգուտ կ'անցնին: Ծար չկայ, պիտի երթանք Մըճլքիդ, հայաքիւրտ Մահմուտ ընտանիքի դիւղը:

Միջոցած է արդէն, երբ կը հասնինք սոյն գիւղը: Կ'երթանք Միհրանի հօրենական տունը: Կը ծանօթանանք իր եղբայրներուն եւ քրոջ: Բոլորն ալ ուրախ են մեր այցելութեան համար: Միհրան պահ մը ներս կը մտնէ. հոն պտուած է իր մահամերձ մայրը՝ Յովհաննէս Հեքիմեանի այրին...

Շրջափակին մէջ կը ծանօթանանք երկու հայորդիներու: Տարօրինակ է, այդ գիւղին հողերուն մէջ մեծ տոկոսը կը պատկանին հայ հինգ ընտանիքներու: Գիւղին գիւղապետն է հայորդի մը՝ Կարապետ: Երեկոյեան աղջամուղջին մէջ, այս հանդիպումը, աշխարհէն կտրուած գրեթէ հայապատկան գիւղին մէջ, որոշ յուզումով կը լեցնէ զիս...

Միհրան, իր տունէն դուրս չելած, մտած էր իր ննջարանը, գլխուն անցնելու համար արաբական գլխաշորը՝ քուֆիէն եւ ակալը:

- Ես պարոն ձօրճ,- կ'ըսէ,- իմ այս արաբական տարագովս զիս ալ գիրքիդ կողքին պիտի դնես, ինչպէս որ առաջին գիրքիդ կողքին դրած ես Սալման Էլ Տրպոյի նկարը...

Քանի-քանի գիրքերու կողքեր կարելի է զարդարել Սալման Տրպոյի կամ Մուհամէտ Մահմուտի պէս քրտացած կամ արաբացած հայորդիներու նկարներով...

Միհրանի հետ հանդիպեցանք իր հօրեղբօրորդիին՝ տոքթ. Կարոյի ընկերակցութեամբ, Ռաս Ուլ Այնի իր տան մէջ, 20 Մայիս 2009-ին:

Շորճ Արէլեան

«Ցեղասպան թուրքը երբեք իր քաղաքականությունն մեջ չի փոխուել». Պատմաբան Էդիկ Մինասեան

Հայոց ցեղասպանութեան 108-րդ տարելիցին նուիրուած «Հորիզոն»-ի յատուկ թողարկման համար մեր թղթակիցը գրուցել է Երեսնի պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետի դեկան, պատմական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր Էդիկ Մինասեանի հետ:


- Պարոն Մինասեան, ինչպէ՞ս կը գնահատէ՞ Հայաստանի՝ ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը, պահանջատիրութեանը միտուած փայլերը:

- Մենք մեր պահանջատիրութիւնից չպէտք է հրաժարուենք: 1990 թուականի օգոստոսի 23-ին Հայաստանի անկախութեան հռչակագրում առանձին կէտով արձանագրուեց Հայաստանի Հանրապետութեան՝ Օսմանեան Թուրքիայում՝ Արեւմտեան Հայաստանում իրականացուած ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին աջակցելու փաստը: Ընդ որում՝ դա հռչակագրում իբրեւ կարեւոր փաստաթուղթ արձանագրուեց: Եւ դա ընկաւ Հայոց պետականատեղծման հիմքում: Իսկ արդէն 90-ական թուականներին դարձաւ մեր արտաքին քաղաքականութեան գլխաւոր ուղղութիւններից մէկը: Արձանագրենք, որ արդէն 2015 թուականին՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, ընդունուեց 100-ամեակի հռչակագիրը, որում արձանագրուեց մեր պաշտօնական դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ-ն սատար է կանգնելու ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ պահանջատիրութեան խնդրին: Դա առաջին անգամ պաշտօնապէս արձանագրուեց, այն կարեւորագոյն փաստաթուղթ է:

Միւս կարեւոր փաստը՝ 2016-ին Հռոմի Ֆրանցիսկոս պապն իր պատարագի ժամանակ արձանագրում կատարեց՝ ասելով, որ արիւնոտ վէճը շարունակում է արնահոսել, այն չի ապաքինուել, եւ դրա գլխաւոր մեղաւորը Թուրքիան է, ապա յատուկ շեշտեց, որ հարկաւոր է ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը: Եւ գրեմենք՝ յետոյ Թուրքիայի կողմից ինչ արշաւ կազմակերպուեց Հռոմի Ֆրանցիսկոս պապի դէմ՝ Թուրքիան հանդէս եկաւ իր ժխտողական կեցուածքով:

-108 տարի է անցել, բայց հայութիւնն էլի՞ ցեղասպանուելու վտանգի առաջ է:

-Թուրքիայի այս ձեռագիրը շարունակեց իր եղբայր Ադրեջանը, յիշե՛նք 1988 թուականի Սումգայիթեան ցեղասպանութիւնը՝ յայտնի շարունակութեամբ՝ Պաքուի, Խնալարի, Կիրովաբադի ու միւս շրջանների ադրեջանահայութեան դէմ իրականացուած ցեղասպանութիւնը, որի արդիւնքում մազապուրծ 350-400 հազար հայ հանգրուան գտաւ Հայաստանում: Թուրքիայի ցեղասպան քաղաքականութիւնը շարունակեց Ադրեջանը: Թուրքիայի աջակցութեամբ ու հովանաւորութեամբ՝ Ադրեջանի այդ նոյն ձեռագիրը տեսանք 2020 թուականի 44-օրեայ պատերազմի ժամանակ, որտեղ մենք մօտ 5 հազարի հասնող մարդկային կորուստներ ունեցանք: Ադրեջանն այսօր էլ Թուրքիայի հովանաւորու-



թեամբ ցեղասպան քաղաքականութիւն է կիրառում: Դրա ապացոյցն են նաեւ 2022 թուականի սեպտեմբերին Ջերմուկում տեղի ունեցած դէպքերը, երբ Ադրեջանը նորից յարձակման անցաւ եւ մեր դիրքապահներին գնդակահարեցին: Այդ քաղաքականութիւնը նրանց ձեռագիրն է: Բնական է, որ այդ ձեռագրից նրանք չեն հրաժարուել:

- Իսկ Ինչպէ՞ս կը գնահատէ՞ Հայաստանի վարած ֆաղափականութիւնը հայ-թրքական յարաբերութիւնների համատեքստում:

- Կեղասպանութիւնը երբեք իր քաղաքականութեան մէջ չի փոխուել: Թուրքիայի հետ հարեւանութիւն անելու մասին խօսելով՝ պէտք է ասեմ՝ նախ հարկաւոր է զգուշանալ: Առայժմ Թուրքիայի հետ ջերմ, բարեկամական յարաբերութիւններ հաստատելը որեւէ օգուտ չի կարող տալ: Որոշողը Թուրքիան է, ոչ այնքան մենք: Դեռեւս 2009 թուականին ֆուտպոլային դիւանագիտութիւնը ցոյց տուեց, որ թելադրող կողմը թրքական կողմն է: 2015-ին, թրքական խորհրդարանը այդ հայ-թրքական արձանագրութիւնները չհաստատեց, հետեւաբար այն ետ կանչուեց Ազգային ժողովից՝ դրանք փաստեր են: Այս փաստերը զալիս են ապացու-

ցելու՝ որքան էլ խաղաղութեան պայմանագիր ուզենանք կնքել, մէկ է՝ Թուրքիան իրեն դիտարկում է որպէս թելադրող կողմ եւ որոշակի պահանջներ ներկայացնող: Պատմութիւնից լաւ իմանալով Թուրքիայի քաղաքական վարքագիծը՝ կարող ենք նշել՝ Թուրքիան, հաշուի առնելով իր քաղաքական նպատակադրումները, նախապայմաններ անպայման առաջադրելու է: Եթէ Թուրքիային իր շահերը թելադրեն գնալ այդ քայլին, կը գնայ, եթէ իր թելադրած նախապայմանները հաշուի չառնուեն, ապա չի գնայ այդ քայլին: Թուրքիան Արցախում լուրջ յաջողութիւնների հասաւ՝ Ադրբեջանին հովանաւորելով, օգնելով: Եթէ տարածքները, Հազրութիւն ու Շուշին բռնազբաւեցին, աւելին՝ էրտողանը հասցրեց Ալիեւի հետ Շուշիի յայտնի համաձայնագիրը ստորագրել, որը փանթուրքիստական բնոյթ ունի:

Թուրքիան այսօր էլ չի հրաժարուել իր փանթուրքիստական նկրտումներից: Ադրբեջանը յոխորտում է՝ շարունակելով իր մեծ եղբոր քաղաքականութիւնը: Ալիեւը յայտարարում է, թէ Երեւանն «իրենցն է»: Սա, իհարկէ, խեղդատակութեան ժանրից է, աւելին՝ Զանգեզուրն ու միւս շրջաններն էլ Արեւմտեան Ադրբեջան է անուանում, ամբողջ Արեւելեան Հայաստանը համարում է իրենց տարածքները՝ ջանալով հասնել փանթուրքիստական նպատակներին, այն է՝ Նախիջևանով Թուրքիայի հետ ուղիղ կապ ապահովել, միաժամանակ հազորակցական ճանապարհների անուան տակ հասնել գլխաւոր նպատակին: Թուրքիան ջանում է հասնել նրան, որ Հայաստանը հրաժարուի պահանջատիրութիւնից: Ցեղասպանութեան ենթարկուած մեր ժողովուրդը չի կարող ներել Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ լուրջ քայլեր էին ձեռնարկուել վերջին տարիներին: 2019 թուականին ԱՄՆ Գոնկըէսի երկու պայտանները որոշում կայացրին՝ ցեղասպանութեան դատապարտման հետ կապուած՝ ի հարկէ, նախագահն այն դեռեւս չի ստորագրել: 2001 թուականին Հայոց ցեղասպանութիւնը ճանաչած Ֆրանսայում 2019-ից Ապրիլ 24-ը նշուած է որպէս Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակի ազգային օր: Ցեղասպանութիւնը ճանաչող պետութիւնների քանակը 2,5 տասնեակից անցնում է, իսկ այդ շարքում կան այնպիսի երկրներ, ինչպիսիք են Գերմանիան, որի խորհրդարանը 2016-ին ճանաչեց Հայոց Ցեղասպանութիւնը՝ ընդունելով Գերմանիայի մեղաւկցութիւնը՝ որպէս Թուրքիայի դաշնակից: Այսքանից յետոյ որոշակի զիջումների գնալը լուրջ է: Թրքական կողմն էլ դեռ չի հասել իր գլխաւոր պահանջի կատարմանը, այն է՝ հայկական կողմի հրաժարումը ցեղասպանութեան հարցից: Քանի դեռ Թուրքիան դրան չի հասել, խաղաղութեան պայմանագիր չի ստորագրի: Բացի այս՝ սահմանների բացումը որոշակի հետեւանքներ է ունենալու մեզ համար՝ թրքական տարրի ներխուժումը ՀՀ սահման, ինչն էլ է, նաեւ բնակչութեան ժողովրդագրական փոփոխութիւններ կարող են լինել: Ցեղասպանութեան միջազգային ճանաչման համար մեր պայքարը պէտք է շարունակուի նոր ուժով: Դա նաեւ մեր արժանապատուութեան դրսեւորումն է:

- 2023-ի Փետրուարի 22-ին ՄԱԿ-ի արդարադատութեան միջազգային դատարանը որոշում կայացրեց, որտեղ նշուում էր՝ Ադրբեջանը պարտաւոր է ձեռնարկել բոլոր միջոցները, որպէսզի ապահովի տրանսպորտի եւ մարդկանց անխափան տեղաշարժը Բերձորի միջանցքով՝ երկու ուղղութիւններով: Միաժամանակ դատարանը միաձայն մերժեց Ադրբեջանի ներկայացրած միջանկեալ միջոցների պահանջը: Այսուհետեւ Ադրբեջանը շարունակում է իր փաղափակուութիւնը: Ի՞նչ փայլեր պետք է

ձեռնարկել արցախահայութեանը գոյարանական վտանգից փրկելու համար:

- Ադրբեջանն, իր թիկունքում ունենալով Թուրքիային, անպայման խորհրդակցում է այդ երկրի հետ: Վերջին պատերազմն էլ դրա արդիւնքն էր: Ադրբեջանն, օգտուելով աշխարհաքաղաքական այս իրավիճակից, փորձում է իր քաղաքականութիւնը թելադրել՝ իբրեւ յաղթող կողմ: Ադրբեջանն իր ագրեսիան չի թուլացնում նոյնիսկ ՀՀ տարածքների նկատմամբ: Զօրք են տեղադրել Գեղարքունիքում, Միւսիքում, Արցախում էլ առաջանում են... Այո, անգամ միջազգային դատարանի որոշումը հաշուի չի առնում: Եւրոպական երկրները մեծ չափի ճնշում չեն գործադրում, եթէ գործադրեին, հաւանաբար, հաշուի կ'առնէր: Արցախը, որը դարեր ի վեր հայի բնօրրան է եղել, չի կարողանում անհրաժեշտ օգնութիւն ու աջակցութիւն ստանալ, այնտեղ մարդասիրական ճգնաժամ է: Ադրբեջանի նպատակը՝ Արցախը հայաթափելն է: Հարկաւոր է վարել այնպիսի քաղաքականութիւն, որ Ադրբեջանի վրայ եւրոպական երկրները զանգուածային ճնշում գործադրեն: Այդ դիւանագիտութեան մէջ պէտք է ներգրաւել նաեւ Ռուսաստանին: Ես դէմ եմ այս հակառուսական ցոյցերին ու ելոյթներին: Այս պարագայում մենք այլընտրանքային տարբերակ չունենք: Պատմութիւնը դասեր ունի, այդ դասերը մենք այսօր հաշուի չենք առնում: Այդ դասերը ցոյց են տուել՝ ո՛չ Ֆրանսան, ո՛չ Անգլիան, ո՛չ էլ ԱՄՆ-ն երբեք զօրք չեն ուղարկի այստեղ մեր շահերը պաշտպանելու համար: Իսկ ռուս խաղաղապահներն այսօր էլ ինչ-որ կերպ կարողանում են զսպել Ադրբեջանի խտրականը: ՌԴ-ի հետ յարաբերութիւնները պէտք է առաջին պլան մղել, ի հարկէ, ոչ ոք չի ասում՝ Եւրոպայի հետ յարաբերութիւններ չհաստատէ՛ք: Մենք պիտի դիւանագիտական պայքար մղենք, որպէսզի միջազգային ճնշումն ուժեղացնենք ու հասնենք յաջողութիւնների, բայց լուրջ ցուցանիշներ չկան այդ ուղղութեամբ: Հնարաւոր է, որ որոշակի աշխատանք տարւում է այդ ուղղութեամբ, բայց չեմ կարող ասել, թէ լուրջ յաջողութիւններ ենք արձանագրել այս գործում:

- Ադրբեջանը զօրք է կուտակել Արցախի հետ սահմանին: Ադրբեջանի կողմից ռազմական յարձակման վտանգ տեսնո՞ւմ է՞:

- Այո՛, այդպիսի հաւանականութիւն տեսնում եմ: Ադրբեջանն անպայման նախապատրաստուած է յարձակման: Այս ընթացքը ցոյց տուեց՝ եթէ խաղաղ ճանապարհով չի կարողանում հարցեր լուծել, անպայման դիմում է ռազմական գործողութիւնների, դրա հաւաստիքն է նաեւ այսօր սահմանային շրջաններում զօրքերի կուտակումը: Մեզ անհրաժեշտ է ռազմական հագեցուածութիւնն ու սահմանների պաշտպանութիւն ուժեղացնել: Դժուար է ասել, թէ հեռանկարում ինչ կը լինի: Ամէն դէպքում, դիւանագիտական աշխատանք պէտք է իրականացնել, միջազգային ատեանում Ադրբեջանի վրայ յաւելեալ ճնշումների պէտք է հասնել: Իմանալով Թուրքիայի եւ Ադրբեջանի հետապնդած քաղաքական նպատակները՝ ես կարծում եմ՝ նրանք հեշտութեամբ չեն գնայ խաղաղութեան պայմանագիր ստորագրելուն: Նրանք իրենց կամքն են թելադրելու՝ յստակ նպատակադրումով: Ադրբեջանն իր նկրտումները փորձում է իրագործել եւ որոշակի յոյսեր ունի, որ կը հասնի յաջողութեան:

Յասմիկ Բալէխան

Ցաւը

Յաւը կ'ուզես մոռնալ, չիշել կամ յիշողութեանդ դռները ամուր փակել անոր առջեւ, որ այլեւս չզգաս, չտառապիս, ականջիդ հասած բառերը չլսես, որպէսզի նոր պատուհաններ բանաս ու թոքերդ ներծծեն թարմ թթուածին, նոր էջեր բանաս յուշերու օրագրերուդ մէջ, աւելի հանգիստ ապրիս, աւելի գեղեցիկ պատկերներով տեսնես կեանքը, չմտածես Յաւը նորածինիդ փոխանցելու, վիշտին ահաւորութիւնը քեզմէ հոգ աշխարհ եկողին բացայայտելու մասին, որովհետեւ պիտի չուզես, որ ան ալ Յաւին ծանրութիւնը ապրի ամբողջ կեանք մը, ինչպէս քուկդ եղաւ, պիտի չուզես, որ գաւազներուդ հոգիները կրեն նոյն կապանքները, ինչպէս քուկդ կրեց:

Յաւեր կան, որոնք կը մոռցուին, չեն յիշուիր, յիշատակի ալիքներուն մէջ կը կորսուին, կը հեռանան քեզմէ ու չկամ կանուխ, կ'անյայտանան ընդմիջում, կը ցնդին օդին մէջ: Չես ուզեր յիշել, ո՛չ մէկ բան կը մնայ մէջդ՝ քեզ յիշեցնելու դէպքը, դէմքերը, պահը, օրը, վայրկեանը: Կրնայ նոյնիսկ պատահիլ, որ դէպքը անմիջականօրէն մարմնովդ ապրած չըլլաս, ականատես եղած չըլլաս, սարսափն ու վախը ներաշխարհիդ վրայ ազդած չըլլան, մահուան մէջէն իսկ անցած չըլլաս. այդպիսի Յաւը կը չուզէ, կը պրծի՝ կ'երթայ, ինչ լա՛ւ, մտածումներդ, մտթ խոկումներդ կը թիթեւանան, նոյնիսկ կը գեղեցկանան, էութիւնդ կը պարպուի, Յաւը չի գետեղուիր յիշողութեանդ գոց ծալքերուն մէջ, կը դադրի մաս կազմել յուշերուդ:

Ազգովին ապրած մեծ Յաւին մասին է, որ կը գրեմ այս պահուն:

Յաւին, որուն ենթարկուեցան մեծ-մեծերը, եւ տակաւին ա՛յդ կ'ապրինք՝ Յաւը կրելով անձնապէս կամ հաւաքականօրէ՛ն այսօ՛ր, եօթ միլիոն մարդ, եղեռնէն 108 տարի ետք: Յաւի զգացումը դեռ կը հետապնդէ մեզ, չի հեռանար մեզմէ՝ մեր մտքէն, մեր մտածումներէն, ո՛չ մէկ պահ, ո՛չ մէկ օր, ո՛չ մէկ վայրկեան: Կրել Յաւը, որուն բնական ժառանգորդները դարձանք մե՛նք, առանց անոր անմիջական զոհը ըլլալու, առանց Տէր Զոր քշուե-

լու, առանց լլկուելու, առանց խեղդամահ նետուելու արիւնով ներկուած եփրատի ջուրերուն մէջ, առանց անոր մէջ դառնալու ծփացող դիակ:

Արշակը, Եղիսապէթը, Կարպիսը, Արշալոյսը, Կարապետը, Քնարը, Օննիկը, Յասմիկը, Պօղոսը, Յակոբը, Գայիանէն, Գաբրիէլը, Շուշանը, Հայկուհին, Մկրտիչը, Սրբուհին, Նուէրը եւ մեր գերզաստանի պատկանող շատ մը անուններ, որոնք Յաւը զգացին իրենց ամբողջ էութեամբ, եղան իսկական լուռ տառապողները աղէտին, չարաշուք ոճիրներուն, աքսորին, սովին, հիւանդութեան ու սարսափին, գաղթին: Ո՛չ մանկութիւն, ո՛չ պատանեկութիւն եւ ո՛չ երիտասարդութիւն, նոյնիսկ ծերութիւն չապրեցան անոնք. ո՛չ, չեղան սովորական մահկանացուներ: Ունեցան անմարդկային ճակատագիր, ջարդարար ու նենգամիտ երկրի մը պէյերն ու փաշաները որոշեցին ոչնչացնել զիրենք, գրաւել իրենց տուններն ու այգիները, դպրոցներն ու սրբավայրերը: Տարիներով մեր մեծերը իրենց կորուստներուն Յաւը լացին, իրենց հողին, այգիներուն ու պտուղներուն համը փնտռեցին, հազար ափսոսացին, որ կեանքի լաւագոյն տարիները ապրեցան դառն սովորմի, հալածանքի ու վախի փոթորիկներուն մէջ. անոնք յոյսով աղօթեցին եւ ուխտեցին, իրենց տան դիմացը գտնուող Սուրբ Կարապետ ուխտավայրին յառած իրենց աչքերը՝ գաղտնաբար մոմեր վառեցին, որպէսզի իրենց ուխտերը Բարձրեալն Աստուած լսէ, սպասեցին, որ երկնքի սուրբերը հասնին փրկելու ընտանիքի ամեն մէկ անհատը, աղօթեցին եւ իրենց մատաղները բաժնեցին թուրք հարեւաններուն՝ որպէսզի Բարձրեալն իրենց ուխտը ընդունի, որ կարենան արագ խոյս տալ անիծեալ այդ երկրէն:

Յաւը մեծ էր, Յաւը այնքան մեծ էր, որ նոյնիսկ թրքական ջուրերէն հեռանալէ տարիներ ետք չուզեցին խօսիլ, երկար տարիներ ապրեցան Յաւին տուած ցնցումով, չմոռցան զայն երբե՛ք, Յաւը զգացին ու զայն պահեցին իրենց թաքուն յուշերուն, գիշերուան երազներուն մէջ, ու ամէն օր վերապրեցան նոյն մղձաւանջը: Յաւը ուժգին



Լուսանկարը՝ «Հիրոշիմա», Արթո Չաքմաքչեանի

էր: Նոր երկրին մարտահրաւէրները պահ մը մոռցուցին անոնց Յաւը, Նոր աշխարհը իրենց պարգեւեց նոր կարելիութիւններ, գաւազներ, թոռներ, վաստակ, տուներ, նիւթական միջոցներ, նոր ուրախութիւններ, զբօսանքներ, արձակուրդներ, սակայն անիծուած այդ Յաւը կարծես սեւ թանաքով արձանադրուած մնաց իրենց մտքի ու հոգիի բոլոր ծալքերուն մէջ, թոյլ չտուաւ որ ամբողջական ըլլան իրենց ապրած ուրախութիւնն ու բարգաւաճ կեանքը, Յաւը հոն էր ընդմիջում՝ մտած էր իրենց մարմնի բջիջներուն մէջ, լեզուին տակ՝ պահուած ամէն մէկ բառին խորքը:

Յաւը ծանր էր, եւ անոնք երկար տարիներ յանցաւոր ըլլալու հոգեբանութեամբ ապրելով՝ չուզեցին խօսիլ այդ մասին, չուզեցին վիշտը փոխանցել իրենց արգանդէն ծնած յաջորդներուն: Արշակն ու Եղիսապէթը, երբ դէմ-դիմաց նստէին, իրենց առանձնութեան մէջ, ծածուկ կը խօսէին կորուսածներուն ու քշուածներուն մասին, ու անոնց հետքերը մէկ առ մէկ կը փնտռէին: Երբ Յաւին մասին խօսուէր, Կարպիս կը յուզուէր, ու աչքերը կը



Միջագետքի անապատներէն փրկուած հայ որբեր

Թրջէին վշտի արցունքով: Ան կեանքի աւարտին իսկ քիչ խօսեցաւ իր որբութեան մասին: Քոյրը դարձած էր մայր ու անբաժան հոգեհարազատ: Հիմա նոր կը հասկնամ Կարպիսին խոկուն մտածումներուն ու մելամաղձոտութեան դրդապատճառը:

Քնարը, Արշալոյսը եւ Յասմիկը, ընդհակառակը, խօսողներն էին, իրենց ապրածն ու վերլիշածը անվերջ պատմողներն էին, Յաւը մեզի փոխանցողներն էին, պատմութեան ժապաւէնը մեր աչքին առջեւ, հագար անգամ ցուցադրողներն էին, մեր մտքերուն մէջ անջնջելիօրէն Յաւը դրողներն էին: Անոնք պատանեկութիւն եւ երիտասարդութիւն չապրած սերունդն էին, աքսորին, սովին, բորոտութեան, վախի ու սարսափի մէջ մեծցած մանուկներն էին: Յաւը ուժգնութեամբ զգացին, հարագատներուն, հողին, այգիին, դրացիներուն ու շրջապատին կորուստը ամբողջ կեանք մը ողբացողներն էին, ափսոսացողներն էին իրենց սահմանուած փոթորկոտ ճակատագրին վրայ: Անոնք էին որ Յաւը մեր մէջ Զարթօն-

քի վերածեցին, պայքարի ուժը մեր մէջ փոխադրեցին, մարդկային անարդարութեան դէմ ազադակ բարձրացնելու քաջութիւնը մեր արեան մէջ սրակեցին:

Հագիւ հասած ինքնավստահութեան եւ ինքնագիտակցութեան սեմին, փրկուած՝ եկեր էին Աղեքսանդրիոյ նաւահանգիստը՝ իրենց ետին ձգելով ծննդավայրի իրենց տունն ու այգին, իրենց հետ բերելով միայն անբաժանելի յիշատակներ ու ապրող պատկերներ:

Միջերկրականի եզերքին էր, որ Յաւը դարձուցին նաև մերը:

Իսկ Միջերկրականէն ու Ատլանտեանէն ասդին մենք ենք որ վարակեցինք մեր զաւակներն ու այս անգամ միասին զգացինք, խոկացինք ու կրկնեցինք մեր մեծերուն մտածումները: Յաւեր կան, որոնք կ'ուզես ջնջել յիշողութեանդ պատատէն, հեռացնել մարմնիդ ամէն մէկ բջիջէն, մոռնալ ընդմիշտ, որովհետեւ վէրքը չի սպիանար, չի գոցուիր: Շատ յաճախ թաւալած տարիները կը յաջողին փոշոտած թղթածրարներուդ մէջ անյայտացնել

զանոնք, նորը ստեղծել մէջդ, շուրջդ, սակայն այս Յաւը կարելի է ըլլար բնաջնջել-հեռացնել նորերուն ալ հաւաքական յիշողութիւնէն ու մտքէն: Կարելի է ըլլար երբեք սրբել պատմութեան մեր էջերէն. ան կը մնայ գրուած կարմիրով ու դլխագիր, ինչպէս դրոշմուած կը մնար անոնց յիշողութեան յետին ծալքերուն մէջ:

Յաւը նսեմացնող զգացում տուած էր աղէտը ապրողներուն՝ առաջին սերունդին:

Յաւը զարթօնքի եւ պայքարի ուժ տուած էր անոնց յաջորդներուն՝ մեզի՝ երկրորդ սերունդին:

Յաւը Յեղասպանութեան ճանաչման մղիչ ուժը հանդիսացաւ մեզ յաջորդողներուն՝ մեր զաւակներուն ու թոռներուն՝ երրորդ եւ չորրորդ սերունդներուն:

ՆԱԶԱՆ Ա.

Հայկական Հարցի համառոտ ակնարկ

1878-ի Պերլինի վեհաժողովին Հայկական հարցը միջազգային ուշադրութեան առարկայ կը դառնայ 61-րդ յօդուածով, որ բարենորոգումներ կը սահմանէ թրքական տիրապետութեան ներքեւ գտնուող Հայկական նահանգներէն ներս: Մինչեւ Հայկական յեղափոխութեան ժայթքումը եւ այնուհետեւ Հայաստանի անկախութեան հռչակումը, Հայկական հարցը միջպետական շահավաճառութեանց առարկան կը դառնայ:

1895-96 300 հազար հայերու սպանդին իբրեւ հակազգեցութիւն, Հայ յեղափոխականներ կը գրաւեն Պանք Օթոմանը եւ ստիպողական կացութեան տակ կը դնեն Հայկական նահանգներու բարեկարգութեան գերխնդիրը, այս ուղղութեամբ բանուկ եւ ազգեցիկ ներգործութեան մը պահանջքով:

Հայկական յեղափոխութեան ինքնապաշտպանողական եւ կազմակերպական ջանքերը՝ հայուերէնը 600 տարուան ստրկամտութենէ ուժի դիրքերու վրայ կը տեղադրէին:

1908-ի Օսմանեան սահմանադրութեան հռչակումով հայուերէնը միջանկեալ շունչ մը կ'առնէր:

Խորհրդարանական ներկայացուցչութեան մը հաստատումով պետութենէն ներս վերահսկիչ լծակներ ձեռք կը բերէր՝ փորձելով բարւոքել իր վիճակը: Սակայն 1909-ի յետադիմական յեղաշրջման փորձն ու Ատանայի կոտորածը, իսկ 1913-էն սկսեալ Իթթիհատ վէ թէրաքքը տիրող կուսակցութենէն ներս փանթրքական խմորումները՝ ծանր ետքայլի մը վախերը կ'ուրուագէին:

1914-ին, վրայ կու գայ Համաշխարհային առաջին պատերազմը. դէպքերը սրընթաց գլխիվայր կ'ընթանան, Օսմանեան պետութեան ղեկը վերցուցած փանթրքիստները համաշխարհային պատերազմը պատեհ առիթ կը գտնեն իրագործելու Իսթամպուլէն դէպի կեդրոնական Ասիա ձգուող Մեծն թուրանիոյ ծրագիրը, որուն դիմաց ազգային միակ այլատարր տակաւին կը մնար Հայուերէնն ու Հայաստանը: Հետեւաբար, Հայր պետք է թանգարանային նմուշի մը վերածուէր փանթրքիզմի դրօշը պարզած օսմանեան պետութեան եւ ապա քեմալական թուրքիոյ համար:

Պետական յատուկ ծրագրումով՝ 1915-ին Յեղասպանութեան ծրագիրը շատ հատուկ կը գործնականացուի Հայ մտաւորականութեան եւ պետական գործիչներու անհետացումով, առական սեռի դաւադիր զինուորագրումով եւ հաւաքական սպանդով, Հայ ազգաբնակչութեան դէպի Միջագետքի անծայրածիր անապատները բռնագաղթով եւ հաւաքական կոտորածներով:

Մինչեւ 1918 հայութեան բնօրրանին հինգ վեցերորդը կը հայաթափուէր, մէկուկէս միլիոն հայեր կը նահատակուէին: Իսկ Ուրֆայի, Շապին Գարահիսարի, Սասնոյ, Մուսալերան եւ Վանի հերոսամարտերէն միայն վերջին երկուքը փրկարար ելք կ'ունենային: 1918 Մայիսին հայութեան գոյութեան իրաւունքն իսկ ոտնակոխելու ելած ցեղասպան պետութիւնը դէմ յանդիման կը գտնուի Բաշ Ապարանի, Ղարաբաղի եւ Սարդարապատի բռնու դիւցազնամարտերուն եւ հայկական անկախ պետութեան գոյառումին:

Իր կայսրութեան քայքայման ի տես Համաշխարհային պատերազմին մէջ պարտուող թուրքիան իր ճիգերը չի խնայեր փանթրքական երազին ի խնդիր:

Հիւսիսային Ախալքալաքի հայութիւնը թրքական ասպատակութիւններու արհաւիրքը կ'ապրի, Հայաստանի

հանրապետութեան ամբողջ տեւողութեան երեւանի պորտակապը հանդիսացող Վայոց Ձորը երկրէն ներս թրքական խորոյկի մը կը վերածուի մերթ ընդ մերթ խզելով Երեւանի հետ Ջանգեղուրի կապը: Նորաստեղծ թրքացեղ Ատրպէյճանը 1920-ին Շուշիի 30 հազար հայ բնակչութիւնը կը կոտորէ:

Հայաստան ոչ միայն կը դիմակայէ թուրք-ատրպէյճանական նուաճողական ճնշումները, այլեւ կը ձգտի բարելաւել իր բնական սահմանները՝ ընդարձակուելով 12 հազար քառ քլմէն 70 հազար քառ քլմի:

1920 Օգոստոս 10-ին Սեւրի մէջ 88-րդ եւ 89-րդ յօդուածներու ձեռքբերումով, թուրքիան կը ճանչնայ Հայկական անկախ պետութեան մը փաստը եւ պատմական հողային իր իրաւունքները: Հայաստան Հայ Դատի բովանդակ լուծումը կ'ապահովէ միջազգային պարտաւորութեան մը ծիրէն ներս: Սակայն դէպքերը գահավէժ ընթացք կը բռնեն: Նախապէս Օսմանեան կայսրութեան պատկանող նեղուցներուն շուրջ անգլիական եւ ֆրանսական ներկայութիւնը կը մտահոգէ խորհրդայինները, որոնք Սեւրը մերժող քեմալական թուրքիան զօրացնելով կ'ուզեն նեղուցները անոնց ազդեցութենէն դուրս բերել:

Սեւրի ստորագրութեան ժամանակամիջոցին, նոյն ամսուն սովետական օրհնութեամբ Պաքուի մէջ կը գումարուի Արեւելեան ժողովուրդներու համագումար մը, ուր էնվեր համաթրքական կայսրութեան մը գաղափարը առաջ կը քաշէ: Սովետներու եւ քեմալական թուրքիոյ փոխհակացութիւնները արագօրէն իրենց գործնական ուղին կը մտնեն: Հայաստան կը դիմագրաւէ հիւսիսէն եկող համայնավար հոսանքը եւ ներքին խլրտումները: Սովետական ճնշումին գուգահեռ, քեմալական թուրքիան առանց պատերազմի յայտարարութեան արեւմուտքէն կ'անցնի յարձակողականի, արագօրէն զբաւելով Կարան ու Ալեքսանդրապոլը:

Դեկտեմբեր 2ին Հայաստանը կը խորհրդայնանայ: 1921 Մարտ 16-ի Խորհրդային Ռուսաստանի եւ թուրքիոյ միջեւ Մոսկուայի համաձայնագրով Խորհրդային Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ սահմանները կը ճշդուին Կարսի, Արտահանի եւ Իգտիլի վերջնական զիջումով: Թուրք - խորհրդային այս համաձայնագիրը իր արտայայտութիւնը կը գտնէ նաեւ 1923 Յուլիս 7-ի խորհրդային իշխանութեանց կողմէ Ղարաբաղի եւ Նախիջեւանի Խորհրդային Ատրպէյճանին բռնակցումով:

«Սեւր»ի միջազգային պարտաւորութեանց դասալքութեան հունաւորումով, 1923 Յուլիս 24-ին կը կնքուի Լօզանի դաշնագիրը, ուր թուրքիա կը վերատիրանայ Սեւրի դաշնագրով կորսնցուցած Արեւմտահայաստանին, Ուիլսոնեան Քիւրտիստանին, Իգմիլիի եւ Կոստանդնուպոլսոյ: 1920-23 հայ մարտիկներու կողմէ տեղի կ'ունենայ հայասպանութեան ճարտարապետներու արդարահատուցումը, յաջորդաբար կը զգետնուին Մեծ Եղեռնը ծրագրողներ Թալէալթը, Սայիտ Հայիմ փաշան, Պէհաւատին Շաքիրը, ձեմալ Ազմին ու էնվէրը:

Յեղասպանութենէն վերապրած հայեր կը ցրուին աշխարհի տարածքին (Հայաստանի հանրապետութիւնը արդէն ունէր 300 հազար գաղթականներ) եւ կը կազմաւորեն գաղութներ, հայապահպանումն ու վերապրումը կը դառնան գերխնդիրներ:

1970-էն 2022 բազմաթիւ երկիրներ եւ միջազգային կազմակերպութիւններ կ'ընդունին եւ կը դատապարտեն Հայոց Յեղասպանութիւնը:

ԽԱՆԸՄ ՔԵԹԵՆՃԵԱՆ

Ուրֆայի հերոսամարտի դիւցազնուհին

Խանըմ Քեթենճեան, յեղափոխական անունով՝ Արմենուհի, նախ Ուրֆայի բողոքական վարժարանը յաճախած է, ապա աւարտած Խարբերդի Ամերիկեան Գոլէճը: Յեղափոխական գաղափարներով տոգորուած՝ կանուխէն անդամագրուած է Հ.Յ.Դաշնակցութեան Կարմիր խաչին: Հերոսամարտի նախօրեակին, ի՛նք էր շրջանի կանանց զինավարժութեան եւ մարտական ջոկատներուն պատասխանատուն:

